# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 43 (1493) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 27, 2010
VOLUME 30, NO. 43 (1493) SATURDAY, NOVEMBER 27, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՕԳՏԱԿԱՐ ԱԽՏԱՃԱՆԱՉՄԱՆ ԵՒ ՊԱԿԱՍԱՒՈՐ ԴԱՐՄԱՆՈՒՄԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՌ՝ ՌԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

***ՏՈՔԹ. Ա. ԳԱՋԱՆՃԵԱՆ***

Հ.Բ.Ը.Մ.-ի Քալիֆորնիոյ շրջանակային միաւորներէն, Ասպետներու գործադիր վարչութիւնը կազմակերպած էր հայրենի «Ժառանգութիւն» ընդդիմադիր կուսակցութեան պարագլուխ, Հայաստանի Հանրապետութեան առաջին արտգործ նախարար եւ Ազգային Ժողովի անդամ՝ Ռաֆֆի Յովհաննէսեանի հետ հրապարակային հանդիպում մը, որ տեղի ունեցաւ ընթացիկ տարուան Նոյեմբեր 4, կ.վ. ժամը 8.00-ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Մանուկեան-Տէմիրճեան Աղանանեան հանդիսասրահին մէջ:

Հայրենի հիւրին զեկոյցի նիւթն էր Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը եւ անոր դիմագրաւած մարտահրաւէրները:

Ռաֆֆի Յովհաննէսեանի հետ տեղի ունեցող Ասպետներու կազմակերպած հրապարակային հանդիպումը՝ «Երեկոյ մը հայ մտաւորականի մը հետ»

*Շար.ը էջ 6*

## ՆԱԹՕ-Ի ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ ՈՉ ՅԱՅԱՆՊԱՍՏ ԲԱՆԱՁԵՒ

*Անցնող շաբաթավերջին Լիզպոնի մէջ գումարուած ՆԱԹՕ-ի գագաթաժողովի աւարտին հրապարակուեցաւ հռչակագիր մը, ուր շեշտը դրուած է Հարաւային Կովկասի երկիրներու եւ Մոլտովայի հողային ամբողջականութեան վրայ, անտեսելով ազգերու ինքնորոշման իրաւունքը: «Եւրատլանտեան տարածքի խաղաղութեան առումով Հարաւային Կովկասի եւ Մոլտովայի մէջ պահպանուող երկարատեւ տարածաշրջանային հակամարտութիւնները կը շարունակեն դաշինքի համար մեծ մտահոգութիւններու խնդիր մնալ»,- ըսուած է հռչակագրին մէջ:*

*«Մենք հաւատարիմ կը մնանք մեր աջակցութեան՝ Հայաստանի, Ատրպէյճանի, Վրաստանի եւ Մոլտովայի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան, անկախութեան եւ ինքնիշխանութեան եւ նաեւ պիտի շարունակենք աջակցիլ ջանքերուն, այս տարածաշրջանային հակամարտութիւններու խաղաղ կարգաւորման ուղղութեամբ՝ նկատի առնելով այս սկզբունքները», - ըսուած է ՆԱԹՕ-ի գագաթաժողովին ընդունուած հռչակագրին մէջ:*

*Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան կանխատե-*

*Շար.ը էջ 4*

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ԱԹՈՌԱԿԻՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

*Երուսաղէմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան գրաւոր դիմած է միաբաններու տարեկան ժողովին, առաջարկելով կանոնակարգ մշակել՝ աթոռակից պատրիարք ընտրելու համար:*

*Արիս Արքեպիսկոպոս Շիրվանեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է որ, 90 տարեկանը անց Թորգոմ Պատրիարքի դիմումը թէեւ կատարուած է առողջական պատճառներով, այսուհանդերձ, անակնկալ էր Միաբանութեան տարեկան ժողովին ներկայ եղող հոգեւորականներուն համար:*

*Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան ընդհանուր ժողովը տեղի ունեցած է Նոյեմբերի 15-18-ը, մասնակցութեամբ նաեւ միաբանութեան անդամներուն Միացեալ Նահանգներէն եւ Աւստրալիայէն:*

*Աթոռակից պատրիարքի ընտրութեան կանոնակարգը մշակելու համար կազմուած է յանձնախումբ մը, որ պիտի գլխաւորէ ԱՄՆ-ի Արեւելեան թեմի առաջնորդ Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան:*

*Կանոնակարգը մշակելու աշխատանքները աւարտելու համար պայմանաժամ սահմանուած է 2011-ի Մարտ ամիսը:*

*Որոշ տեղեկութիւններու համաձայն, աթոռակից պատրիարքի ամենահաւանական թեկնածուն կը նկատուի Խաժակ Արքեպիսկոպոսը:*

## ԾԱՆՐ ՄԻՋԱԴԷՊ ՂԱՐԱԲԱՂԻ ԶՕՐԱՄԱՍԵՐԷՆ ՄԷԿՈՒՆ ՄԷՋ

*Նոյեմբեր 19-ին, կէս գիշերուան մօտ, Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան բանակի զօրամասերէն մէկուն մէջ տեղի ունեցած է ծանր միջադէպ մը, որու ընթացքին զոհուած են 4 եւ վիրաւորուած՝ 6 զինուորական ծառայողներ:*

*Դէպքի մասին կան բազմաթիւ վարկածներ, որոնք սակայն վերջնականապէս ճշդուած չեն: Բացառուած է միայն ատրպէյճանական գործողութեան վարկածը:*

*Նոյեմբեր 22-ին յայտարարուեցաւ որ, ձերբակալուած է նոյն զօրամասի մէկ զինծառայող, որու ինքնութիւնը եւ քրէական գործի այլ մանրամասներ չեն հրապարակուած:*

*Միւս կողմէ, «Արցախ Նիւզ» կայքի կը տեղեկացնէ որ, Արցախի «Հելսինքեան Նախաձեռնութիւն-92» հասարակական կազմակերպութիւնը հանդէս եկած է յայտարարութեամբ, պահանջելով Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարի հրաժարականը:*

*«Լեռնային Ղարաբաղի «Հելսինքեան Նախաձեռնութիւն 92» կոմիտէն 2010 թ. Նոյեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի Բանակի զօրամասերից մէկում տեղի ունեցած միջադէպը, որի հետեւանքով զգալի*

*Շար.ը էջ 4*

## ԱՐԱ ՍԱՐԱՖԵԱՆ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԷ ԹՐՔԱԿԱՆ ՈՒՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱԼՔԵՐԸ

*Երեքշաբթի Նոյեմբեր 16ի երեկոյեան ժամը 8ին, Հայ Ամերիկեան Խորհուրդը «ՀԱԽ» Կլենտէյլի Հանրային գրադարանի հանդիսասրահին մէջ կազմակերպած էր հրապարկային դասախօսութիւն մը՝ Թրքական Ուրացման Քաղաքականութեան Ծալքերը շահեկան նիւթին շուրջ: Այս առթիւ յատկապէս Լոնտոնէն հրաւիրուած էր օրուան բանախօս պատմաբան Արա Սարաֆեան:*

*Սոյն միջոցառումին հանդիսավարն էր Յարութ Տէր Դաւիթեան, որ Հայ Ամերիկեան Խորհուրդի անունով ողջունեց ներկայ հասարակութիւնը: Ան ամփոփ գիծերով ներկայացուց Արա Սարաֆեանը, որպէս Օսմանեան կայսրութեան վերջին շրջանի եւ Հայկական Ցեղասպանութեան պատմութեան մասնագէտ պատմաբան, ինչպէս նաեւ Լոնտոնի «Կոմիտաս» հետազօտական հիմնարկի հիմնադիր տնօրէն: Հայութեան եւ Հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ «Կոմիտաս»ի ցարդ լոյս ընծայած*



**Պատմաբան Արա Սարաֆեան**

*բազմաթիւ հրատարակութիւններու վերջին երկու գործերն են հռչակաւոր «Կապոյտ Գիրքը» եւ «Աղթամար, Միջին Դարու Հայ Ճարտարապետութեան Գոհար մը» հատորները: Հոն Թրքերէն եւ*

*Շար.ը էջ 19*

## Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՀԵՏ



**Ս. Դ. Հ. Կ.-ի պատուիրակութիւնը նախագահ Բակօ Սահակեանի եւ առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեանի հետ**

*Նախապէս առնուած ժամադրութեան մը համաձայն, Շաբաթ 20 Նոյեմբեր, 2010, կէսօրէ առաջ ժամը 10:30ին, Արեւմտեան Ամերիկայի Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը՝ Կլենտէյլի Հիլթոն պանդոկին մէջ հանդիպում մը*

*Շար.ը էջ 19*

# ԵՐԿԻՐԸ ՅԱՆՁՆՈՒԵԼ Է ՈՐ ՊԱՅՈՒԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Մոսկուայում ՌԴ վարչապետ Պուտինի հետ տեղի ունեցած հանդիպմանը, Սերժ Սարգսեանը յայտարարել է, թէ Հայաստանը լիայոյս է, որ Ռուսաստանի հետ գործակցութեան արդիւնքում դուրս կը գանք ճգնաժամից, քանի որ Հայաստանի հիմնական ձեռնարկութիւնները կամ համատեղ են, կամ ռուսական կապիտալով:*

*Որեւէ երկրի որակի մասին շատ բան են վկայում այդ երկրի տնտեսութեան մէջ կատարուող արտասահմանեան ներդրումները թէ իրենց ուղղուածութեան, թէ նաեւ իրենց աշխարհագրութեան առումով: Այդ տեսանկիւնից, Հայաստանում ռուսական կապիտալի ներդրումների գերակշռութիւնը բաւական յատկանշական է:*

*Ընդ որում, նկատելի է, որ այլ երկրների ներդրողները, կարծես թէ առանձնապէս մեծ հետաքրքրութիւն չեն ցուցաբերում Հայաստանի հանդէպ, այդպիսով թերեւս ընդունելով, որ Հայաստանը Ռուսաստանի կապիտալի տիրոյթն է: Իսկ ինչպէս է ռուսական կապիտալը ամրապնդուել Հայաստանում: Դա հետաքրքրական է այն առումով, թէ ինչպիսին է այդ կապիտալի նշանակութիւնը երկրի արդիականացման առումով:*

**Հայաստանի իշխանութիւնը տարիներ շարունակ չի ցանկանում դրսեւորել տնտեսա-քաղաքական իրական բարեփոխումների կամք եւ ձերբազատուել ռուսական կապիտալի «գերութիւնից»**

*Բանն այն է, որ ռուսները Հայաստանի տնտեսութեան մէջ իրենց կշիռը ձեռք են բերել ոչ թէ այլ երկրների ներդրողների հետ տնտեսական մրցակցութեան շնորհիւ, երբ ասենք Հայաստանին առաջարկել են աւելի յարմարաւէտ պայմաններ եւ շահաւէտ բիզնես-ծրագրեր, այլ գերազանցապէս քաղաքական ազդեցութեան, քաղաքական ճնշումների միջոցով: Այդպէս Ռուսաստանին անցան այն ձեռնարկութիւնները, որով Հայաստանը փակեց իր 100 միլիոն պարտքը Ռուսաստանին: Այդպէս ռուսիֆիկացուեց Հայաստանի ամբողջ էներգետիկ համակարգը, նոյնիսկ այլընտրանքային Իրան-Հայաստան գազամուղը:*

*Այդ ոլորտներում ռուսները ոչ թէ ներկայացնում էին Հայաստանի համար շահաւէտ բիզնես ծրագրեր, այլ ընդամէնը Հայաստանին չէին թողնում որեւէ այլընտրանք, քանի որ այլընտրանքի մասին մտածելու պարագայում Հայաստանը կարող էր յայտնուել տարբեր դժուարութիւնների առաջ: Վառ օրինակներից մէկը Հայաստանի բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումն էր, որին սկզբից մասնակցում էին նաեւ ամերիկեան եւ եւրոպական ընկերութիւններ, բայց մրցոյթը ի վերջոյ այդպէս էլ չաւարտուեց որեւէ արդիւնքով, իսկ ցանցերը որոշ ժամանակ անց առանց մրցոյթի վաճառուեցին ոլորտում բոլորովին անյայտ մի ընկերութեան, որն էլ իր հերթին դրանք յետոյ վերավաճառեց ՌԱՕ ԵԷՍ-ին:*

*Գուցէ ցանկացած այլ երկիր, որ Հայաստանի հանդէպ կ՚ունենար այդպիսի քաղաքական ազդեցութիւն, կ՚օգտագործէր դա այստեղ իր տնտեսական շահն առաջ տանելու եւ տնտեսական լծակները աւելացնելու համար: Այդ առումով խնդիրը թերեւս Ռուսաստանի պահուածքը չէ: Խնդիրը Հայաստանի պահուածքն է: Աւելի կոնկրետ այն, որ Հայաստանի իշխանութիւնը տարիներ շարունակ չի ցանկանում դրսեւորել տնտեսա-քաղաքական իրական բարեփոխումների կամք եւ ձերբազատուել ռուսական կապիտալի «գերութիւնից», երկրում ձեւաւորելով իրապէս ազատական տնտեսական եւ քաղաքական միջավայրեր: Այդ դէպքում, Հայաստանում ռուսական կապիտալի գերակայութիւնն էլ կը դառնայ շատ աւելի կառուցողական, ոչ թէ առկայ ճահճի բիւրեղացմանը նպաստող:*

*Բանն այն է, որ երբ ռուսական կապիտալը զգայ, որ Հայաստանում ձեւաւորուել է տնտեսական եւ քաղաքական մրցակցային միջավայր, ապա ստիպուած կը լինի արդէն Հայաստանում իր տեղն ամրացնելու համար դիմել ոչ թէ քաղաքական լծակների, այլ բիզնես մրցակցութեան կանոններին եւ փորձել շահաւէտ առաջարկներով, ոչ թէ աներկբայ շանտաժներով տեղ ունենալ Հայաստանում: Այլապէս, Հայաստանում ամրապնդուած ռուսական կապիտալը գրեթէ ոչնչով չի նպաստում երկրի տեխնոլոգիական արդիականացմանը: Չի նպաստում նաեւ երկրում արդիական բիզնես մշակոյթի ձեւաւորմանը: Այդ ամէնի պատճառն այն է, որ ռուսական կապիտալը Հայաստանում իրեն համարում է անմրցակից, անկախ ամէն ինչից:*

*Իհարկէ, Ռուսաստանի իշխանութիւնն էլ գիտակցում է այդ ամէնն ու անում հնարաւորը, Հայաստանում մրցակցային միջավայրի ձեւաւորում թոյլ չտալու համար: Բայց այդ դէպքում Ռուսաստանի վրայ պատասխանատուութիւնը թողնելը հաւասարազօր է Հայաստանի իշխող «էլիտաների» կամքի բացակայութիւնն արդարացնելուն:*

*Ռուսաստանն անում է այն, ինչ պէտք է անի, թէկուզ եւ իր իսկ համար թոյլ տալով ռազմավարական սխալներ: Մեզ համար կարեւորը պէտք է լինի այն, թէ ինչ պէտք է անի Հայաստանի իշխանութիւնը: Այդ իմաստով, բացի Ռուսաստանին անվերապահ ենթարկուելուց, Հայաստանի իշխանութիւնը կարծես թէ մէկ էլ անում է հնարաւորը, Արեւմուտքին իր այդ պահուածքի մոտիւների օբիեկտիւութեան մէջ համոզելու համար:*

*Եթէ առկայ իրավիճակը չբաւարարեր Հայաստանի «էլիտային», ապա այդ «էլիտան» վաղուց էր ձեռնամուխ եղել այն փոխելու գործնական քայլերի: Մեծ հաշուով, Ռուսաստանն ընդամէնը օգտւում է իրավիճակից եւ մտածողութիւնից:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*Հասարակութեան տարբեր շերտերից յաճախակի են հնչում եկեղեցուն եւ պետութեանն ուղղուած մեղադրանքներ՝ «աղանդաւորների դէմ չպայքարելու» վերաբերեալ: Յաճախ եկեղեցին ու պետութիւնն իրենց հերթին «զեկուցում» են հասարակութեանը, թէ որքան արդիւնաւէտ է աղանդների դէմ իրենց պայքարը: Բայց եկէք նախ համաձայնուենք, որ «աղանդ» հասկացութիւնը ոչ հասարակական ընկալման մակարդակով, ոչ էլ իրաւաբանօրէն սահմանուած չէ: Եւ այս պայմաններում է, որ ոչ ստանդարտ հագնուած կամ քսուած աղջիկներին բերման են ենթարկում ոստիկանութիւն՝ կասկածելով, թէ նրանք «էմոներ» են:*

*Չեմ բացառում, որ Հայաստանում «էմոներ» է լ կան, բայց նոյնիսկ այս դէպքում նրանց քաղմաս տանելով (եթէ, իհարկէ, նրանք օրէնք չեն խախտել), ոչնչի չես հասնի: Պէտք է փորձել հասկանալ այդ երեխաներին եւ յետոյ միայն որոշել՝ նրանք պոտենցիալ հասարակական վտանգ ներկայացնո՞ւմ են, թէ՝ ոչ: Իմ պատանեկութեան տարիներին էլ կար երիտասարդական «ենթամշակոյթ», որը կարելի է պայմանականօրէն անուանել «հիպպիական շարժում»: Սակայն այդ շարժումը ունէր լուրջ փիլիսոփայական եւ գաղափարական հիմքեր, դրա ազդեցութեան տակ ծնուեցին մշակութային արժէքաւոր երեւոյթներ՝ օրինակ, ռոքերաժշտութեան մէջ:*

*Իմ պատկերացմամբ, աղանդաւորն այն մարդն է, որը, բացի իր խմբակի ճշմարտութիւնից, ոչ մի այլ ճշմարտութիւն չի ցանկանում ճանաչել, եւ որն աշխարհի բոլոր երեւոյթներին նայում է իր այդ ճշմարտութեան ակնոցով: Մեր քաղաքականութեան մէջ, հետեւաբար, նոյնպէս կան աղանդաւորներ: Իշխանաւորները Հայաստանում փողի աղանդաւորներ են. այնպիսի տպաւորութիւն է, որ նրանք իրենց տան պատերին կպցրել են դոլարի նկարը եւ ամէն օր առաւօտեան եւ երեկոյան այդ նկարի առաջ նստում են աղօթքի: Այդ պաթոլոգիկ հաւատքը հիմնուած է, հաւանաբար, արեւմտեան արժէքների գաւառական ընկալման վրայ այդ արժէքները դիտւում են զուտ որպէս ինքնահաստատում ապրանքների սպառման միջոցով:*

*Իսկ ընդդիմադիր աղանդներում, դեռեւս ԱԺՄ-ի ժամանակներից, ընդունուած է ժամերով նստել, ջուր ծեծել եւ երկարբարակ քննարկել, թէ ով է ռեժիմի դէմ պայքարող զուլալ գաղափարական մարտիկը, իսկ ո՞վ այդ միակ ճիշդ կրօնը չդաւանող ռեժիմի սպասարկուն:*

*Ինչ մնում է երեխաներին, ապա դեռ հարց է, թէ ինչն է աւելի վտանգաւոր՝ աչքերի շուրջ 4-5 սանտիմետրանոց ներկ քսե՞լը, թէ՝ 4-5 ժամ համակարգչի մօտ նստելով «օդնոկլասնիկի»-ի մէջ նկարներ գցելն ու գնահատականներ դնելը: Երկրորդ դէպքում աչքերի շուրջ սեւութիւնը «բնական» է դառնում:*

*«ԱՌԱՒՕՏ»*

# ԹԵԹԵՒ ՈՒ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ

*Ի՞նչն է այս օրերին կարեւոր Հայաստանի կեանքում՝ ընտրական օրէնսգրքի փոփոխութիւննե՞րը, որի շուրջ միջազգային կազմակերպութիւնները երկօրեայ համաժողով են հրաւիրել Երեւանում: Չնայած կայ կարծիք, որ հին օրէնսգրքով էլ է հնարաւոր նորմալ ընտրութիւններ անցկացնել, եւ դրա համար միայն իշխանութիւնների քաղաքական կամքն է բացակայում: Իսկ գուցէ աւելի կարեւոր է բանակի հարցը, որտեղից մենք ամէն օր տագնապալի լուրեր ենք ստանում, եւ զոհերի քանակը չի նուազում: Թէեւ այս առումով էլ ոմանք ասում են, որ երկիրը պատերազմի մէջ է եւ ցանկացած երկրի բանակում էլ զոհեր ու դժբախտ պատահարներ են լինում:*

*Հաւանաբար աւելի կարեւորը ՆԱՏՕ-ի գագաթաժողովն է եւ այնտեղ ընդունուած հռչակագիրը, որտեղ մեզ համար աննպաստ ձեւակերպում տեղ գտաւ՝ Հարաւային Կովկասում տարածքային ամբողջականութիւնը պահպանելու առումով: Սակայն այս մասով էլ մեզ հանգստացնողներ կան, թէ ՆԱՏՕ-ի այդ հռչակագիրն ընդամէնը թղթի կտոր է, այն գործողութիւնների ուղեցոյց չէ եւ ղարաբաղեան կարգաւորման համար վճռորոշ չի լինելու: Գուցէ մեզ համար կարեւորն այս օրերին Վահան Խալաֆեանի դատավարութի՞ւնն է Հրազդանում, որը սպաննուեց ոստիկանութիւնում գտնուելու ժամանակ, ինչը նշանակում է,*

*Շար.ը էջ 5*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

## ՀԱՅԱՍՏԱՆ

# «168 ԺԱՄ». ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ՝ ՄԻՆՉԵՒ ՏԱՐԵՎԵՐՋ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ

«168 ժամ» թերթի համաձայն, նախագահականի նստավայրին մօտ կանգնած աղբիւրների համաձայն, ԵԽԽՎ-ի եւ միջազգային այլ կառոյցների ճնշման արդիւնքում Հայաստանի իշխանութիւնները քննարկում են մի քանի քաղբանտարկեալների մինչեւ տարեվերջ ազատ արձակելու հարցը: Այս փուլում խօսքն այն քաղբանտարկեալների մասին է, ում առնչութեամբ կարող է կիրառուել պատժից պայմանական վաղաժամկէտ արձակելու տարբերակը: Այս պահին լրացել է քաղբանտարկեալներ Գաբրիէլ Գաբրիէլեանի, Մուշեղ Սաղաթէլեանի, Ռոման Մնացականեանի վաղաժամկէտ ազատման ժամկէտը: Սակայն կալանավայրերում նրանցից երկուսի նկատմամբ տոյժ է նշանակուել, ինչն օրէնքով երկարացնում է այդ ակտի կիրառման ժամկէտը: Թէեւ այս իրավիճակում գտնուող քաղբանտարկեալների դէպքում էլ չի բացառւում, որ խրախուսում կիրառուի, որպէսզի մինչեւ տարեվերջ նրանք ազատ արձակուեն: Քաղբանտարկեալներից Ֆելիքս Գէորգեանի, Շմաւոն Գալստեանի, Արամ Բարեղամեանի վաղաժամկէտ արձակման ժամկէտը լրանում է յաջորդ տարուայ Փետրուարին: Քննարկւում է նրանց էլ տարեսկզբին ազատ արձակելու տարբերակը:

Նոյն թերթի տեղեկութիւններով միւս քաղբանտարկեալների առնչութեամբ իշխանութիւնները դեռ չեն կողմնորոշուել:

# ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ. «ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԿՐՕՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԵՆԱՇՆՈՐՀ ՈՒՆԵՆԱԼ»

«Խղճի ազատութեան եւ կրօնական կազմակերպութիւնների մասին» ՀՀ օրէնքի նոր նախագիծը, որը շրջանառութեան մէջ է դրուել անցած տարի, քննադատութեան է արժանացել հայաստանեան մի շարք հասարակական կազմակերպութիւնների, ինչպէս նաեւ Վենետիկի յանձնաժողովի կողմից:

Հայաստանի կրօնական փոքրամասնութիւնների գործունէութեան վերաբերեալ վերջին տարիներին մի շարք ուսումնասիրութիւնների հեղինակ, «religions.am» կայքի խմբագիր Ստեփան Դանիէլեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում կարծիք յայտնեց, որ 2005 թուականից յետոյ, երբ ընդունուեց Հայաստանի Սահմանադրութեան փոփոխուած տարբերակը, լուրջ հակասութիւններ կան խղճի ազատութեան մասին 1991-ին ընդունուած ու ցայսօր գործող օրէնքի եւ Սահմանադրութեան միջեւ՝ յաւելելով, որ Հայաստանում ամենատարբեր մակարդակներով դեռեւս շարունակւում է կրօնական փոքրամասնութիւնների իրաւունքների ոտնահարումը:

«Հեռուստատեսութեան եւ տպագիր մամուլի որոշ միջոցների կողմից տարւում է ծրագրաւորուած քաղաքականութիւն՝ Հայաստանում կրօնական թշնամանք եւ խտրականութիւն քարոզելու առումով», - նշեց Դանիէլեանը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Մայր Աթոռի դիւանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը կարծիք էր յայտնել, որ կրօնական փոքրամասնութիւնները Հայաստանում չեն հալածւում:

«Իմ գնահատմամբ կրօնական ազատութիւնների բաւական բարձր ցուցանիշ գոյութիւն ունի Հայաստանի Հանրապետութիւնում», - ասել էր Մայր Աթոռի դիւանապետը:

Մինչդեռ, աւետարանական եկեղեցու հովիւ, վերապատուելի Ռաֆայէլ Գրիգորեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում պնդեց, որ իրենց համայնքի անդամները հասարակական որոշակի խմբերի, կազմակերպութիւնների եւ լրատուամիջոցների կողմից հետեւողական քարոզչական յարձակումների են ենթարկւում, ինչը, վերջինիս խօսքերով, անթոյլատրելի է:

«Խօսում են ազգի միաւորման մասին, բայց իրենք աւելի շատ են ազգը պառակտում իրենց վարուեցողութեամբ՝ խօսքով, թողարկուած յօդուածներով, հասարակական կարծիքը լրիւ դեզինֆորմացուած ձեւով կազմաւորելով», - ասաց վերապատուելի Ռաֆայէլ Գրիգորեանը:

Ստեփան Դանիէլեանը ամփոփում է. - «Մենք ունենք մենաշնորհներ տնտեսութեան ոլորտում, մենք ունենք մենաշնորհներ մնացած ոլորտներում, եւ այսօր Հայ առաքելական եկեղեցին ցանկանում է կրօնական ոլորտում մենաշնորհ ունենալ»:

# ՀԱՅԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ԵՒ ԶԲԱՂՒՈՒՄ ԿՕՇԿԱԿԱՐՈՒԹԵԱՄԲ

Հայերը գերադասում են բարձրագոյն կրթութիւնը միջին մասնագիտական կրթութիւնից: Այս մասին ասուլիսի ժամանակ ասաց ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան նախնական եւ միջին մասնագիտական կրթութեան վարչութեան պետ Ռոբերդ Աբրահամեանը՝ ներկայացնելով որոշ վիճակագրական տուեալներ:

Այսպէս, Եւրոպայում կրթութիւն ստացողների 60-70 տոկոսը բաժին է ընկնում միջին մասնագիտական կրթութեանը: Հայաստանում այդ թիւը կազմում է 30 տոկոս:

Իր հերթին մասնագիտական կրթութեան եւ ուսուցման ազգային փորձագէտ Մարինէ Յակոբեանը նշեց, որ մասնագիտական կրթութիւնը շատ կարեւոր է, քանի որ ապահովում է սպասարկման ոլորտը: «Ամէն մի կրթութիւն իր խնդիրներն է լուծում: Մարդիկ 5 տարի սովորում են բարձրագոյն կրթութիւն ստանալու համար, իսկ յետոյ գնում են վարպետի մօտ, օրինակ, վարսավիրութիւն սովորելու համար»,- նկատեց նա:

Յակոբեանը պատմեց, որ ինքը հանդիպել է մի մարդու, որը ստացել է մագիստրոսի կոչում, սակայն փող վաստակելու համար սկսել է զբաղուել կօշկակարութեամբ:

# ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ

Հայ ազգային կոնգրէսը մերժել է Ընտրական օրէնսգրքում իշխանութիւնների ներկայացրած առաջարկութիւնների շուրջ Նոյեմբեր 22-ին Ազգային ժողովում կազմակերպուած քննարկումներին մասնակցելու հրաւէրը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Հայ ազգային կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեանը այդ առնչութեամբ ասաց. - «Իշխանութիւնները Ընտրական օրէնսգրքի նոր նախագիծ են բերել քննարկման եւ առաջարկում են, որ քաղաքական եւ հասարակական ուժերը մասնակցեն այդ քննարկմանը: Մեզ համար հասկանալի է՝ դա ինչի համար է արւում. իշխանութիւնները փորձում են պատրանք ստեղծել, որ իբր բոլոր այս կեղծիքները, որոնք տեղի են ունեցել նախագահական ընտրութիւններին, քաղաքի աւագանու ընտրութիւններին եւ Ազգային ժողովի ընտրութիւններին, հետեւանք են օրէնսդրութեան անկատարութեան, եւ կարծես փորձում են ներքաշել այդ խաղի մէջ նաեւ այլ քաղաքական ուժերի, ինչպէս նաեւ միջազգային տարբեր կառոյցներին: Մենք դրա հետ կտրականապէս համաձայն չենք, մենք կարծում ենք, որ նորմալ ընտրութիւններ կարելի էր անցկացնել նաեւ գործող օրէնքով՝ Ընտրական օրէնսգրքի շրջանակներում, մենք վստահ ենք, որ խնդիրը՝ կեղծիքների հետ կապուած խնդիրը բացարձակապէս որեւէ կապ չունի Ընտրական օրէնսգրքի անկատարութեան հետ»:

«Երկրորդը, մենք բազմիցս յայտարարել ենք, որ որեւէ քննարկման կամ երկխօսութեան մէջ այս իշխանութիւնների հետ կը մտնենք միայն այն բանից յետոյ, երբ ազատուեն բոլոր քաղբանտարկեալները եւ առաջընթաց լինի մարտի 1-ի սպանութիւնների բացայայտման գործում», - յաւելեց ընդդիմադիր շարժման համակարգողը:

«Ուստի մենք մերժել ենք հրաւէրը, դրա փոխարէն ես ուղարկելու եմ նամակ, որտեղ այդ մերժման բացատրութիւնները կը տրուեն, եւ իմ ելոյթի փոխարէն ես խնդրելու եմ, որ կարդացուի այդ նամակը», - փոխանցեց Զուրաբեանը:

Նա նշեց, որ Հայ ազգային կոնգրէսը, նպատակայարմար չհամարելով ներքաշուել Ընտրական օրէնսգրքի քննարկումների մէջ, այդուհանդերձ, ունի օրէնսգրքի բարելաւման իր առաջարկութիւնները, որոնք թուով 7-ն են եւ որոնք կոնգրէսը ուղարկել է Եւրոպայի խորհուրդ, ինչպէս նաեւ ներկայացրել հանրութեանը:

«Առաջարկներից մէկը օրինակ, այն է, որ բոլոր ընտրատեղամասերում եւ ընտրամասի տեղերում տեղադրուեն տեսախցիկներ, որոնք ամբողջ ընտրական պրոցէսը նկարահանեն: Երկրորդ առաջարկը այն է, որ մատչելի դառնան տեղամասային մատեանները, քանի որ հիմնական կեղծիքները արւում են այդ մատեաններում: Երրորդը՝ աւելի լուրջ քաղաքացիական վերահսկողութեան տակ վերցուի զինուորականների քուէարկութեան գործընթացը, եւ այլն», - ասաց Լեւոն Զուրաբեանը:

# ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԱՒԵԼԻ Է ՎԱՏԱՑԵԼ

Այս տարին Հայաստանը կը փակի տնտեսական աճով: Սակայն դա ոչ թէ տնտեսական դրական գործընթացներով է պայմանաւորուած, այլ նրանով, որ նախորդ տարի տնտեսական ցուցանիշների էական նուազում էր արձանագրուել: Այսինքն աճ կը գրանցուի միայն նախորդ տարուայ համեմատ: Նոյեմբեր 22-ին լրագրողների հետ հանդիպմանն այս մասին ասաց ՀՀ կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրեանը: «Ես նախորդ տարի կանխատեսել էի երկնիշ տնտեսական անկում, ես ասում էի՝ 10-11 տոկոս: Անգամ 15 տոկոս անկումն ինձ զարմացրեց»,- նշեց Ասատրեանը՝ յաւելելով, որ Հայաստանն ԱՊՀ-ում այս տարուայ տնտեսական ցուցանիշներով կարողացել է առաջ անցնել միայն Ղրղըզստանից:

Ըստ նրա՝ հայաստանցիների սոցիալական վիճակն այս տարի աւելի է վատացել: «Հայ հասարակութիւնը, Հայաստանի բնակչութիւնն այս տարուայ Նոյեմբերի 22-ին ապրում է աւելի վատ, քան անցած տարուայ Նոյեմբերի 22-ին: Դուք ամէն տեղ տեսնում էք դժգոհութիւններ, տնտեսութեան առանձին ոլորտներում նկատում էք տեսանելի անկում, որը թուերով չեն կարողանում արձանագրել»,- նշեց Ասատրեանը:

Ըստ նրա՝ Հայաստանում այսօր վարուող քաղաքականութիւնը չի կարող երկրի ապագան ապահովել: «Նեղ, սահմանափակ, շրջափակուած տնտեսական համակարգ, արտաքին տնտեսական կապերի բացակայութիւն կամ հիմնականում բանան ներկրել: Այս տարուայ 8 ամիսներին Հայաստանն արտահանման ցուցանիշով ԱՊՀ երկրների թւում վերջին տեղն է զբաղեցնում: Մենք աւելի վատ վիճակում ենք, քան Տաջիկստանը, Ուզբեկստանը, մենք վերջինն ենք: Սա սխալ վարուող քաղաքականութեան արդիւնք է»,- եզրակացրեց բանախօսը:

# ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆ ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ԱՆՑԱԾ 7 ԹՈՒՐՔԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵԼ ԵՆ

ՀՀ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) Նոյեմբերի 21-ին տեղեկատուութիւն է ստացել հայ-թուրքական պետական սահմանի՝ 13-րդ սահմանապահ ուղեկալի տեղամասում սահմանի խախտման վերաբերեալ:

Նոյն օրը ազգային անվտանգութեան մարմինների կողմից ձեռնարկուած օպերատիւ-հետախուզական միջոցառումների արդիւնքում Սուրէնաւան համայնքի մօտակայքում 7 թուրք սահմանախախտները յայտնաբերուել եւ ձերբակալուել են:

Փաստի առիթով ՀՀ ԱԱԾ Քննչական վարչութիւնում յարուցուել է քրէական գործ ՀՀ ՔՕ-ի 329-րդ (ապօրինի սահմանի հատում) յօդուածի յատկանիշներով:

# ԼՈՒՐԵՐ

## ՆԻԿՈԼԱ ՍԱՐԿՈԶԻՆ ՎՐԷԺ Է ԼՈՒԾԵԼ ՊԱՏՐԻԿ ԴԵՒԷՋԵԱՆԻՑ՝ ԶՐԿԵԼՈՎ ՆՐԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՕՆԻՑ


Նախկին նախարար Պատրիկ Դեւեջեան

*«Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին ինձանից վրէժ է լուծել քաղաքական դաշտում իր որդու՝ Ժանի ճանապարհին կանգնելու համար»: Այս մասին Le Monde պարբերականին տուած հարցազրոյցում յայտարարել է Պատրիկ Դեւեջեանը, ով վերջերս ֆրանսիական նոր կառավարութեան ձեւաւորման հետեւանքով զրկուել է Ֆրանսիայի Տնտեսական վերելքի նախարարի պաշտօնից, ինչպէս նաեւ իշխող կուսակցութեան՝ Օ-դը-Սէն դեպարտամենտի կառոյցի նախագահի պաշտօնից:*

*Դեւեջեանի խօսքով՝ Հոկտեմբերի 15-ին Նիկոլա Սարկոզին իրեն կանչել է նախագահական նստավայր եւ անտեղի մեղադրել Օ-դը-Սէն դեպարտամենտում ներկուսակցական ընտրութիւնների ժամանակ Ժանի դէմ դուրս գալու համար:*

*«Ինձ ասաց՝ «Քեզ անակնկալ է սպասւում»: Տեսանք, թէ ինչ անակնկալ էր սպասւում»,- ասել է Դեւեջեանը՝ յաւելելով, որ Սարկոզին փորձելու է 2011թ. կայանալիք ընտրութիւնների ժամանակ խոչընդոտել իրեն վերընտրուելու Օ-դը-Սէն դեպարտամենտի Գլխաւոր խորհրդի նախագահի պաշտօնում:*

*Նշենք, որ դեռեւս 2009թ. Le Progres պարբերականը գրել էր, որ Պատրիկ Դեւեջեանի եւ Նիկոլա Սարկոզիի միջեւ բարեկամական յարաբերութիւնները կարող են խզուել Ֆրանսիայի նախագահի որդու պատճառով: Այն բանից յետոյ, երբ Պատրիկ Դեւեջեանը յայտարարել է, որ 2011թ. պատրաստւում է վերընտրուել իր ներկայիս պաշտօնում, Ֆրանսիայի իշխող «Ժողովրդական շարժում միաւորում» կուսակցութեան անդամ, պատգամաւոր Իզաբէլ Բալկանին, ով մտերիմ է Ֆրանսիայի նախագահի ընտանիքի հետ, յայտարարել էր, թէ այդ պաշտօնում առաջադրուելու է Նիկոլա Սարկոզիի աւագ որդին՝ Ժան Սարկոզին:*

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԱՂԹԵՑ ՄԱՆԿԱԿԱՆ «ԵՒՐԱՏԵՍԻԼ - 2010» ԵՐԳԻ ՄՐՑՈՅԹՈՒՄ



«Եւրատեսիլ – 2010» երգի մրցոյթի յաղթող Վլադիմիր Արզումանեան

*Հայաստանը ներկայացնող Վլադիմիր Արզումանեանը Շաբաթ, Նոյեմբեր 20-ի երեկոյեան յաղթող ճանաչուեց մանկական «Եւրատեսիլ - 2010» երգի մրցոյթում:*

*12-ամեայ Վլադիմիրը հանդէս եկաւ իր իսկ հեղինակած «Մամա» երգով: Երկրորդ տեղը գրաւեց Ռուսաստանը, երրորդը՝ Սերբիան:*

*Հայաստանը առաջին անգամ է յաղթում մանկական «Եւրատեսիլ»-ում, որին մասնակցում է 2007 թուականից, երբ «Արեւիկ» համոյթը գրաւեց երկրորդ տեղը: 2008 թուականին Հայաստանը ներկայացնող Մոնիկա Մանուչարովան մրցոյթում գրաւել է 8-րդ տեղը, իսկ անցած տարի Լուարա Հայրապետեանը երկրորդն էր:*

*Վլադիմիր Արզումանեանը ծնունդով Ստեփանակերտից է, երաժիշտ-մանկավարժների ընտանիքից:*

*Մրցոյթից յետոյ կայացած ասուլիսի ժամանակ Վլադիմիրը յայտնել է, որ անցած գիշեր երազ էր տեսել, թէ ինչպէս օրը լարուած է անցնելու, բայց ի վերջոյ ինքը յաղթելու է. երազը, փաստօրէն, իրականացաւ:*

*Հարցին, թէ ի՞նչ նուէր է ուզում իր յաղթանակի դիմաց, նա պատասխանել է. - «Եղբայր եմ ուզում, եւ մայրս խոստացել է դա, եթէ յաղթեմ»:*

*Վլադիմիրը ասել է, թէ իրեն աստղ չի համարում. - «Աստղերը միայն երկնքում են լինում, ես ընդամէնը մարդ եմ»:*

*Մանկական «Եւրատեսիլ - 2010»-ի կայքէջի փոխանցմամբ՝ Վլադիմիր Արզումանեանը խոստովանել է նաեւ, թէ իրեն դուր է գալիս մրցոյթում Սերբիան ներկայացնող Սոնեան, եւ ինքը Հայաստանը յաղթեց մանկական «Եւրատեսիլ նախօրէին յայտնել է աղջկան այդ մասին:*

*Ասուլիսին մասնակցել է Վլադիմիրի մայրը, ով ասել է, որ անչափ երջանիկ է որդու յաջողութեան կապակցութեամբ եւ այն մեծ յաղթանակ է համարում իրենց համար:*

## ԲՐԻՏԱՆԱՑԻ ՊԱՏՄԱԲԱՆԸ 6-7-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԾԱԹԵԱՅ ԽԱՉԵՐ Է ՅԱՅՏՆԱԲԵՐԵԼ


Հայկական արծաթեայ խաչեր

*Բրիտանացի պատմաբան Թիմ Գրինուդը պնդում է, թէ բացայայտել է առնուազն երեք հայկական հնադարեան արծաթէ խաչ, թէեւ մինչ այժմ գիտնականները կարծում էին, թէ այդ ժամանակաշրջանից պահպանուած հայկական արծաթէ խաչեր չկան:*

*Սուրբ Էնդրիւս համալսարանի դասախօս, պատմաբան Թիմ Գրինուդը իր բացայայտումների մասին օրերս դասախօսութիւն ներկայացրեց Լոնդոնի Արեւելագիտութեան եւ աֆրիկագիտութեան համալսարանում, ու առաջին անգամ հանրութեանը ցուցադրեց այդ խաչերի լուսանկարները:*

*Խաչերի առկայութեան մասին պատմաբանը պատահմամբ է իմացել, ամէն ինչ սկսուել է էլեկտրոնային նամակից:*

*«Փետրուարին մի անսպասելի էլեկտրոնային նամակ ստացայ: Նամակագիրը յայտնում էր, որ մի հին արծաթէ խաչ ունի՝ հայերէն գրութեամբ: Նա Հալէպում մի քահանայի խնդրել է թարգմանել գրութիւնը, իսկ ինձ խնդրում էր ստուգել քահանայի թարգմանութիւնը: Ես առաջարկեցի ինձ ցոյց տալ գրութեան բնօրինակը հայերէնով, եւ հենց այդ ժամանակ տեսայ խաչի լուսանկարները: Դա ուղղակի ցնցող էր, ու ես հասկացայ դրա ամբողջ կարեւորութիւնը հայ արուեստի պատմութեան համար», - ասում է Գրինուդը:*

*Գիտնականը պնդում է, որ գրութեան բովանդակութիւնը, տառերի ձեւը, ինչպէս նաեւ խաչի ձեւը հաստատում են, որ այն պատրաստուել է 6-7-րդ դարերում: Այս շրջանը պատմաբանը անուանում է ուշ հնադար: Գրութիւնից յայտնի է միայն, որ Խուրխուռունեաց գաւառից ոմն Ներսէհի պատուէրով է պատրաստուած խաչը, բայց դրա պատկանելութեան ու պատմութեան մանրամասներ առայժմ յայտնի չեն:*

*Այս առաջին գիւտից յետոյ ուսումնասիրութիւնների արդիւնքում Գրինուդը Ստամբուլի հնագիտական թանգարանում եւս 2 խաչ է յայտնաբերում՝ դարձեալ 6-7-րդ դարերից պահպանուած:*

*«Խաչերից մէկի մասին տեղեկութիւն հրատարակուել է, բայց դա եղել է բիւզանդական արուեստի մասին գրքում: Միւսն առհասարակ մինչ այժմ անյայտ է եղել: Ես գրել եմ թանգարանի ղեկավարութեանը՝ խնդրելով թոյլ տալ ուսումնասիրել խաչերը, առայժմ որեւէ պատասխան չեմ ստացել: Իսկ լուսանկարները կարողացել եմ ձեռք բերել միայն Թուրքիայում գտնուող ընկերոջս օգնութեամբ»:*

*Թիմ Գրինուդը պատմում է, որ իր պապը առաջին համաշխարհային պատերազմի տարիների ապրել է Վրաստանում, եւ նա Կովկասի մասին լսել է մանկուց: Օքսֆորդի համալսարանում պատմութիւն սովորելուց յետոյ Գրինուուդը այժմ զբաղւում է յատկապէս Կովկասի ու Հայաստանի պատմութեամբ:*

## ՆԱԹՕ-Ի ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ

*Շարունակուած էջ 1-էն*

*սելով ատրպէյճանական տեսակէտը որդեգրող բանաձեւի ընդունումը, մերժեց ներկայ գտնուիլ գագաթի այս ժողովին: Հայաստան ժողովին մասնակցեցաւ արտաքին գործոց նախարարի մակարդակով:*

*ՆԱԹՕ-ի բանաձեւը Հայաստանի ընդդիմութեան կողմէ նկատուեցաւ հայկական դիւանագիտութեան «լուրջ ձախողում»:*

*«Հայկական կողմը չի կարողացել պնդել, որ 3 սկզբունքները, մասնաւորապէս՝ ինքնորոշման սկզբունքը, ներառուի այս փաստաթղթում», «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է Հայ Ազգային Գոնկրէսի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի անդամ Վլատիմիր Կարապետեան: - «Սա շատ լուրջ փոփոխութիւն է ՆԱՏՕ-ի վերաբերմունքում ղարաբաղեան հակամարտութեան վերաբերեալ, որովհետեւ ՆԱՏՕ-ն 10-ից աւելի տարի իր բոլոր յայտարարութիւններում յղում է կատարում ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի բոլոր յայտարարութիւնների, մօտեցումների վրայ: Այսօր ՆԱՏՕ-ն ունի իր մօտեցումը, եւ սա կարող է շատ լուրջ հետեւանքներ ունենալ նաեւ հակամարտութեան կարգաւորման գործում»:*

## ԾԱՆՐ ՄԻՋԱԴԷՊ

*Շարունակուած էջ 1-էն*

*մարդկային կորուստներ են եղել, որակում է որպէս բարձրաստիճան զինուորական եւ պետական պաշտօնեաների անպատասխանատուութեան եւ ոչ պրոֆեսիոնալութեան շլացուցիչ փաստ: Տեղի ունեցածը, Լեռնային Ղարաբաղի «Հելսինքեան Նախաձեռնութիւն 92» կոմիտէն որակում է որպէս գագաթնակէտ արցախեան բանակում նկատուող բարոյալքման եւ կոչ է անում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահին, որպէս ԼՂՀ ժողովրդի ինքնիշխանութեան եւ անվտանգութեան երաշխաւոր, անյապաղ ստորագրել հրամանագիր ԼՂՀ պաշտպանութեան նախարարի պաշտօնանկութեան վերաբերեալ եւ բոլոր մեղաւորներին ենթարկել ամենախիստ պատասխանատուութեան՝ հետաքննութեան գործընթացի մէջ ներգրաւելով Լեռնային Ղարաբաղի հանրութեանը».- ըսուած է իրաւապաշտպան կազմակերպութեան յայտարարութեան մէջ:*

# «ՌԱՏԻՔԱԼ». ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՐԻՒՐԱՒՈՐ ԾՊՏԵԱԼ ՀԱՅԵՐ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԻՆՔՆՈՒԹԵԱՆԸ



*Քրիստոնէութեան վերադարձող հայուհի մը կը մկրտուի բողոքական հոգեւորականի ձեռամբ*

«Թուրքիայում շարունակում է աճել իրենց հայկական ինքնութեանը վերադարձողների թիւը»,- իր յօդուածում գրում է թուրքական «Ռտիքալ» պարբերականը:

«Բոլորը մեզ քուրդ մուսուլման էին համարում: Հայրս ու մայրս հաւատացեալ մարդիկ էին: 12 տարեկան հասակում մեր բակի երեխաներն սկսեցին ինձ «գիաւուր» (անհաւատ) անուանել: Մօրս հարցրեցի, թէ ինչու են ինձ նման բան ասում, եւ նա պատասխանեց, որ մենք հայ ենք: Դպրոցում ինձ սովորեցնում էին, որ «հայերը մարդ են կոտորել»: Հայ լինելու համար անընդհատ լացում էի: Տարիներով չէի կողմնորոշւում՝ ինչ անել: Եւ ի վերջոյ որոշեցի իմ նախնեաց կրօնին վերադառնալ: 17 տարի առաջ քրիստոնէութիւն ընդունեցի եւ մինչ այժմ քրիստոնեայ եմ»,-այսպէս է պատմում իր դարձի մասին 37-ամեայ հայ ոսկերիչ Եուսուֆ Եըլմազը:

Եըլմազը միակ օրինակ չէ, գրում է թուրքական թերթը եւ յաւելում, որ անանուն մնալ ցանկացող բարձրաստիճան մի պաշտօնեայի փոխանցմամբ՝ վերջին տարիներին Թուրքիայում զգալի աւելացել է դարձի եկող հայերի թիւը:

«Վերջին 4 տարիների ընթացքում Պոլսոյ պատրիարքութիւն եւ այլ հայկական եկեղեցիներ դիմողները հաշւում են հարիւրաւորներով: Վերջիններս վերադառնում են իրենց կրօնին եւ ինքնութեանը: Յատկապէս ուշադրութիւն է գրաւում երկրի արեւելքում ապրող մարդկանց քրիստոնեայ դառնալու դէպքերի մեծ քանակը»,-նշում է նոյն աղբիւրը եւ մի դէպք պատմում, թէ ինչպէս է Պոլսում բնակուող ազգայնականութեամբ յայտնի մի փաստաբան 5 տարի առաջ միամիտ իմացել է իր հայ լինելու մասին: Վերջինս բարդ դրութեան մէջ է յայտնուել, քանի որ յայտնի է եղել իր ազգայնականութեամբ: Սակայն նա էլ մի քանի տարի անց փոխել է իր կրօնը, մկրտուել ու դարձել քրիստոնեայ հայ:

Գեդիքփաշայ ի բողոքական եկեղեցու հոգեւոր առաջնորդ Գրիգոր Աղաբաօղլուն էլ իր հերթին «Ռատիքալ»-ին յայտնել է, որ Թուրքիայի արեւելեան նահանգներում բնակւում են 1 միլիոն հայեր, ովքեր չեն ուզում կամ վախենում են բացայայտել իրենց ինքնութիւնը: «Սակայն վերջին տարիներին իշխանութիւնների վարած քաղաքականութեան արդիւնքում աւելի շատ ծպտեալ հայեր բացայայտում են իրենց ինքնութիւնը, մկրտւում ու հայկական անուններ վերցնում: Այնուամենայնիւ, Թուրքիայի արեւելեան շրջաններում աւելի բարդ է դարձի գալը, այստեղ մեծ են մուսուլմանների ճնշումները դարձի եկած քրիստոնեաների նկատմամբ: Որոշ դէպքերում դարձի եկածները նաեւ իրենց ընտանիքների, ազգականների կողմից են հալածանքների ենթարկւում»,- նշում է հայ բողոքական հոգեւորականը:

«Ռատիքալ»-ը նաեւ ներկայացնում է ազգային ինքնութեան վերականգնման ճանապարհը: Արմատներին վերադառնալ ցանկացողները նախ դիմում են պետութեանը, որպէսզի պաշտօնական փաստաթղթերում փոխեն իրենց կրօնական պատկանելութեան դիմաց գրուած «մուսուլման» բառը «քրիստոնեայ» բառով, ապա դիմում են եկեղեցուն: Եկեղեցին էլ իր հերթին մկրտում է նրանց, եւ նրանք վերադառնում են իրենց արմատներին:

HayNews.am

## ԹԵԹԵՒ ՈՒ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ

*Շարունակուած էջ 2-էն*

որ մարդն անպաշտպան է անգամ այնտեղ, որտեղ, թւում է, ամենապաշտպանուածը պէտք է լինի: Սակայն այս առումով էլ են մեզ մխիթարում, թէ՝ անցումային շրջանի բոլոր երկրներում էլ իրաւապահ համակարգն իր բարձրութեան վրայ չի եղել, եւ լաւ է, որ գոնէ դատավարութիւն է ընթանում ու մեղադրեալի աթոռին ոստիկաններ են: Այդ դէպքում ի՞նչն է կարեւոր 2010-ի վերջի Հայաստանում. գուցէ մանկական «Եւրատեսի՞լը», որտեղ յաղթանակը մթագնեց Լիսաբոնն ու աննպաստ հուչակագիրը, Ղարաբաղն ու բանակը:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

# ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՆՈՐԱՍՏԵՂԾ «ԴԵՐՍԻՄՑԻ ՀԱՅԵՐԻ» ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶԲԱՂՈՒԵԼՈՒ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՄԲ



*«Դերսիմցի հայերու» միութիւն անդամերիտասարդները*

Թուրքիայում նորաստեղծ «Դերսիմցի հայերի» միութիւնը շատ կարճ ժամկէտում հաւաքել է 600 ընտանիք, որի անդամները ծնուել են Թունջելիում (Դերսիմ):

Թուրքական «Սապահ» փոխանցմամբ՝ մօտ 8 ամիս առաջ սկսուած աշխատանքների արդիւնքում «Դերսիմցի հայերի» միութիւնը Նոյեմբերի առաջին տասնօրեակում պաշտօնապէս գրանցում է ստացել: Նորաստեղծ միութեան նպատակն է՝ շարունակել հայերէնի պահպանմանն ուղղուած աշխատանքները, վերականգնել հոգեւոր եւ մշակութային արժէքները: Նախնական շրջանում միութիւնը կը զբաղուի հայերէն չիմացող հայերին իրենց մայրենի լեզուն ուսուցանելով եւ Թունջելիի շրջանում գտնուող հայկական գերեզմանների, եկեղեցիների վերականգնման աշխատանքների կազմակերպմամբ:

«Դերսիմցի հայերի» միութեան ստեղծող Սելահաթին Գիւլթեքինը 8 ամիս առաջ դիմել էր դատարան եւ փոխել իր անունը եւ կրօնական պատկանելութիւնը: Այսուհետ Գիւլթեքինի անունն է Միհրան Փրկիչ: «Արդէն չեմ ցանկանում, որ դերսիմցի հայերը կրեն թուրքական եւ քրդական անուններ: Մենք պէտք է ապրենք առանց թաքնուելու»,-նշել է Միհրանը:

Միհրանի յաջորդ քայլը եղել է իր որդու եւ բարեկամների հետ միասին մկրտուելը: Միհրանը նշել է, թէ ինքը մօտ 2 ժամ ուրախութիւնից չի կարողացել կարդալ իրենց միութեան գրանցման պաշտօնական գրութիւնը: «50 տարի ուրիշների հաւատքով ապրելուց յետոյ ես հանգստութեան մէջ եմ, որ իմ ինքնութեանը տէր կանգնեցի»,-շեշտել է Միհրանը:

# «ԹԱՐԱՖ». ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԽԱԽՏՈՒԵՑ ԱՒԱՆԴՈՅԹԸ, ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ Է ՆՇԱՆԱԿՈՒԵԼ ԱԶԳՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԸ

Թուրքիայի հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ խախտուել է չգրուած օրէնքը եւ ազգութեամբ հային նշանակել են փոխքաղաքապետ:

Թուրքական «Թարաֆ»-ի փոխանցմամբ՝ Ստամբուլին կից կղզիների քաղաքապետ Մուսթաֆա Ֆարսաքօղլուն խախտել է թուրքական կարեւոր գաղափարախօսական մի աւանդոյթ եւ փոխքաղաքապետ է նշանակել քաղաքային խորհրդի անդամ Րաֆֆի Հերմոն Արաքսին:

Քաղաքապետ Ֆարսաքօղլուն նշել է, թէ ոչ մահմետական քաղաքացիների իրաւունքների համար մի շարք միջոցներ կարելի է գտնել՝ դրանում միայն անկեղծ կամք դրսեւորելով: «Մենք աշխատում ենք կատարել մեր բաժին պարտականութիւնը: Շատ ամօթ է նոյնիսկ մէկ անգամ օգտագործել «ազգային փոքրամասնութիւն» արտայայտութիւնը: Ժողովրդի կողմից ընտրուած մեր ընկերոջը արժանիօրէն նշանակել ենք այդ պաշտօնին:

Ժողովրդավարութեան զարգացման նորարարական փնտռտուքի արդիւնք է: Եթէ բոլորն էլ անհրաժեշտ կամք դրսեւորեն, հաւատացէք, ամէն ինչ աւելի հեշտ կը լինի»,- նշել է քաղաքապետը:

Նշենք, որ օրեր առաջ «Կուրբան բայրամի» առթիւ, երբ քաղաքապետ Ֆարսաքօղլուն արձակուրդի էր մեկնել, քաղաքապետի պաշտօնը ժամանակաւորապէս ստանձնած Րաֆֆի Հերմոն Արաքսն է կազմակերպել »Կուրբան բայրամի» նամազի արարողութիւնները եւ քաղաքացիների հետ մասնակցել ու նրանց շնորհաւորել իսլամական յայտնի տօնի կապակցութեամբ:

Րաֆֆի Հերմոն Արաքսը հերթով այցելել էր կղզիներ, շնորհաւորել քաղաքացիներին՝ »Կուրբան բայրամի» կապակցութեամբ: «Ես ոչ միայն նամազ կ'անեմ մեր մահմետական եղբայրների հետ, այլ նաեւ կ'աղօթեմ հրեայ եղբայրների սինագոգներում»,- նշել էր հայազգի փոխքաղաքապետը՝ շեշտելով, թէ իսլամական կրօնական արարողութիւններին մասնակցելը անընդունելի չէ:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ՕԳՏԱԿԱՐ ԱԽՏԱՃԱՆԱՉՄԱՆ ԵՒ ՊԱԿԱՍԱՒՈՐ ԴԱՐՄԱՆՈՒՄԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՌ՝ ՌԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

*Շարունակուած էջ 1-էն*

վերտառութեան տակ առնուած, տարբեր ակնկալութիւն մը կը թուէր տալ ներկայ հասարակութեան, որ խուռներամ փութացած էր Աղաճանեան սրահ: Ան եկած էր լսելու իր կեանքի օրինակով գործնապէս հայրենասիրութիւն պատգամող հայ մտաւորական մը: Ան եկած էր լսելու սփիւռքահայ հասարակական գործիչ մը, որ ծնած ու հասակ առած էր Միացեալ Նահանգներ: Ուսանած ու բարձր վկայականներու տիրացած էր Պըրքլի Քալիֆորնիոյ եւ Լոս Անճելոսի Քալիֆորնիոյ Համալսարաններէն: Իր մասնագիտական ուսումը շարունակած էր Tufts-ի միջազգայնօրէն հանրածանօթ Fletcher Դպրոցէն ներս, ուր տիրացած էր Քաղաքական գիտութիւններու, Հայոց Պատմութեան, Արեւելագիտութեան, Իրաւաբանական, դիւանագիտական (M.A.L.D.) եւ միջազգային Օրէնքի բարձրագոյն վկայականներու: Նաեւ՝ ան եղած էր դասախօս TUFTS-էն ներս: Կեանքի ասպարէզ մտած էր իբրեւ միջազգային իրաւագէտ՝ արդիւնաբերական մեծագոյն ընկերութիւններու մէջ բարձր պաշտօններ վարող մասնագէտ: Իններսունական թուականներուն, հայրենիքին ծառայելու ներքին մղումին անսալով, իր ետին թողած փառաւոր կեանք մը յաջողապէս վայելելու ամէն կարելիութիւն՝ ԱՄՆ-ի քաղաքացիութենէն ի սպառ հրաժարելով, հանդերձ ընտանեօք հաստատուած էր իր աղքատիկ, անապահով, երկրաշարժէ զարնուած եւ պատերազմի մէջ իր գոյութեան պահպանման ճգնաժամը ապրող Հայաստան:

Արդարեւ, ներկայ հասարակութիւնը եկած էր իմանալու հայրենիքէն ներս տիրող կործանարար ճգնաժամերէն դուրս բերելու մարտահրաւէրներու մասին: Ի՞նչ ունէր ըսելիք Հայաստանի Հանրապետութեան առաջին արտգործ նախարար Պրն. զեկուցաբերը, այդ ճգնաժամերէն դուրս գալու մասին, գործնական գետնի վրայ:

Րաֆֆի Յովհաննէսեան, նիշդ է, հարազատ պատկերացում մը տուաւ Հայաստանի Հանրապետութենէն ներս տիրող ներքին եւ արտաքին անբաղձալի կացութեան: Ան գիտէր, թէ սփիւռքահայը որոշակի ծանօթ էր այդ բոլորին: Բայց հակառակատոր՝ ան տարածուեցաւ հայրենական կեանքի դիմագրաւած ներքին եւ արտաքին, այսօր աւելի քան երկու տասնամեակներէ ասդին քաշքշուող, Հայաստանը տարբադադրող, բոլորիս ծանօթ տագնապներուն վրայ, որոնք կրնային աղէտալի դառնալ եթէ չի գտնէին իրենց քաղաքական լուծումը:

...Երկիրը չունէր տնտեսական զարգացման հնարաւորութիւններ: Այդ կարելիութիւնները ցաւալիօրէն առանձնաշնորհումները դարձեր էին խումբ մը անպատասխանատու իշխանաւորներու եւ անոնց ենթակայ հարազատ տարրերու, որոնք կը չարաշահէին զանոնք, յաւիտենականացնելու համար իրենց պետական աթոռները, ամէն գնով իրենց անձնական շահերը գերադասելով հայրենիքի շահերէն: Հետեւանքը՞...

Համատարած դարձաւ անգործութիւնը, չքաւորութիւնը, առողջապահական անապահովութիւնը: Ճնշուեցան խօսքի, մամլոյ եւ նոր աշխարհայեացքներու քարոզչական ազատութիւնները: Սահմանադրական, ժողովրդավարական կեանքի եւ ֆիզիքական ապահովութեան բացակայութիւնը վախի մթնոլորտի մէջ մնաց համեստ քաղաքացին: Անգամ Սահմանադրական դատարանը անզօր դարձաւ երաշխաւորելու, պաշտպանելու երկրի Սահմանադրական գործընթացը: Տակաւին, ըստ կամս խտացան քաղաքական բանտարկեալներու շարքերը, լռեցնելու համար ընդդիմադրական շարժումները:

Տարակոյս չկար, որ այդ բոլորի հետեւանքները պիտի ըլլային ամբողջական յուսահատութիւնը եւ կողմնորոշումը՝ դէպի բարձր համեմատութիւններու հասնող զանգուածային արտագաղթի: Դիտել տրուած երեւոյթները, հաստատ, կը վտանգէին երկրի ապագան: Ուշագրաւ էր ներկայ հանդիսատեսներէն մէկուն տուած հարցումը՝ ինչ կը վերաբերի արտագաղթով տակաւ նօսրացող ժողովուրդի ապագայ բանակի կազմութեան դժուարութիւններուն մասին, որոնք յետագային կրնային պատուհասել Հայրենիքի սահմանները պաշտպանելու պատրաստ ժողովրդական կարելիութիւնները: Հայրենիքը դատարկման առաջնորդող արտագաղթո՞վ պիտի պաշտպանուէին անոր սահմանները գալիք նոր ժամանակներուն ... «որոնք կրնային քարտէսի վերածել մայր հողը»:

Արտաքին կացութիւնը նուազ վրդովեցուցիչ չէր: Հայաստան պատրաստ չէր, եւ պէտքը չունէր Թուրքիոյ հետ իր յարաբերութիւնները բարելաւելու անիրապաշտ ակնկալութիւններով տարուած՝ հայ-թուրք բանակցութիւններու մէջ մտնելու: Կարիքը չունէր կամաւորապէս ճնշումներու տակ մտնելու՝ ստորագրելու համար հայ-թուրք Protocoles կոչուող համաձայնագիրը: (Այդ մասին, դեռեւս բանակցութիւնները չսկսած՝ Մեր Անկիւնէ գրած էինք, թէ բանակցութիւններու տալիք արդիւնքը աւելին պիտի չըլլար Լերան ծնունդ տալիք մուկէն. Տ.Ա.Գ.):



Թուրքիա լաւ պիտի խաղար իր աւանդական անպարարի խաղը: Որպէսզի թէ փրկելու համար Հայաստան-Թուրքիա հաշտարար բանակցութիւններու գործընթացը, անգամ՝ ԱՄՆ-ի Նախագահին բառապաշարէն վերացնել տուաւ «Ցեղասպանութիւն» բառը, Անգարայի խորհրդարանէն ներս անոր ունենալիք ելոյթին մէջէն:

Հայաստան չէր կրցած կշռադատել Թուրքիոյ ազգային քաղաքականութիւնը, որ պարզապէս հիմնուած էր Օսմանեան կայսրութեան իրագործած Ցեղասպանութեան ուրացման վրայ: Խօսի՞նք Արցախի մասին: Արցախ աշխարհի հիմնահարցը չէր կրնար գտնել իր լուծումը եթէ Ատրպէյճան հարիւր տոկոս բաւարարութիւն չստանայ:

Րաֆֆի Յովհաննէսեան՝ իր թուարկած տագնապներէն դուրս գալու միջոցներ կը պատգամէր: Հաստատե՛լ ժողովրդավարութիւն: Զօրացնե՛լ երկրի սահմանադրական կեանքը: Առաջնորդուի՛լ ազգի եւ հայրենի գերագոյն շահերով: Տէ՛ր կանգնիլ, վստահի՛լ եւ զօրավի՛գ կանգնիլ մեր առաջատար նոր սերունդներուն: Ուժեղ գործակցութիւ՛նստեղծել Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ: Դառնալ մէ՛կ եւ ամբողջակա՛ն հաւաքականութիւն, բռունցք: Գիտնա՛լ, թէ մէն մի հայու սրբազան պատասխանատուութիւնն է գործնապէս տէ՛ր դառնալ, պաշտպանե՛լ հայրենիքը: Գործնական տիրութիւնը եւ պաշտպանութիւնը՝ բացառուած չէ որ իրենց մէջ բովանդակած ըլլան յեղափոխակա՛ն եւ կամ եղափոխակա՛ն վարկածներ, միջոցառումներ, զգաստութեան հրաւիրելու համար ազգային համընդհանուր շահերը անտեսող վարչակարգը: Այլապէս, մեր այսօրուան վտանգուած «հողը, կրնայ դառնալ քարտէս»:

Մենք կը գտնենք, թէ ներկայ առաքուած պատգամները, թող որ բարոյախօսական բնոյթի ձեւ կը կրեն՝ գերազանցապէս հայրենասիրական ոգի կը ցուցաբերեն: Բայց, ովքե՞ր են անոնք, որ գործադրութեան պիտի դնեն կատարուած կառուցողական թելադրութիւնները: Իշխանութիւննե՞րը, որոնք պատասխանատու են հայրենի ներկայ գահավէժ ճգնաժամերուն: Հայաստան աշխարհի քաղաքական կուսակցութիւննե՞րը, որոնք կը վազեն իրենց հատուածական շահերուն ետեւէն: Սփիւ՞ռքը, որ մշտապէս դրսեցի համարուած ըլլալու քարդոյթը կ'ապրի:

Հայրենիքը իր ներկայ ճգնաժամային, այլապէս կորստաբեր պայմաններուն մէջ, կարիքն ունի բովանդակ հայութեան հաւաքական, անշահախնդրական ու բոլորանուէր բռնցքացած նեցուկին: Եւ անիկա պայմանաւորուած է ստիպողական ազգային միասնութեամբ: Կարելի՞ է գործնապէս մարմին տալ այդ փրկարար միասնութեան: Ա՛յդ մասին լսելու եկած էր հոծ բազմութիւնը եւ կը մտածեմ, թէ ԼՍԵՑ ան՝ Րաֆֆի Յովհաննէսեանի հետ, Նոյեմբեր 4-ին տեղի ունեցած հրապարակային հանդիպման, Հ.Բ.Ը.Մ.-ի Մանուկեան-Տեմիրճեան «Աղաճանեան» հանդիսասրահին մէջ:



# ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿ ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱՒ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆՈՎ



*Պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալփաքեան Պէպօ Սիմոնեանին կը հանցնէ Լիբանանի կրթական նախարարութեան պատուոյ շքանշանը*

*ՀԿԲՄ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ Չորեքշաբթի, 17 Նոյեմբեր 2010-ի երեկոյեան ՀԿԲՄ-ի դարմանատան մէջ ընտրանիի մը ներկայութեան տեղի ունեցաւ լիբանանահայ ծանօթ կրթական մշակ, բանաստեղծ, հասարակական գործիչ Պէպօ Սիմոնեանի Լիբանանի պետական շքանշանի տուչութեան հանդիսութիւնը:*

*ՀԿԲՄ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ տիկ. Հուրի Ճէրէճեան բարի գալուստ մաղթեց պարգեւատրեալին եւ ներկաներուն: Ան նշեց, թէ սոյն շքանշանը կը յանձնուի կրթական, մշակութային եւ հասարակական երկար տարիներու ծառայութիւն ունեցող անձնաւորութեան մը, որ իր շրջապատին մէջ ծանօթ է իբրեւ ուսուցիչ, տնօրէն, դասախօս, հրապարակագիր, գրող եւ բանաստեղծ: ՀԿԲՄ-ի վարչութեան անդամ ընկ. Ալեք Քէօշկէրեան արաբերէնով ընթերցեց Պէպօ Սիմոնեանի պարգեւատրման առիթով Կրթական նախարարութեան հրամանագիրը: Պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալփաքեան Պէպօ Սիմոնեանին փոխանցեց կրթական նախարարութեան պատուոյ շքանշանը, որմէ ետք «Արարատ» պաշտօնաթերթի խմբագիր ընկ. Ահարոն Շխրտըմեան յանուն ՍԴՀԿ հովանաւորութիւնը վայելող միաւորներուն շնորհաւորեց Պէպօ Սիմոնեանը դիտել տալով, որ ան իր վայելած վաստակով ծանօթ հեղինակութիւն մըն է Լիբանանի, հայրենիքի եւ Սփիւռքի տարածքին:*

Ես Հենրիկ Էդոյեանին առաջին անգամ տեսել եմ Երեւանի Հրապարակի կենտրոնական գրախանութում, նոր լոյս տեսած «Փիլիսոփայական բառարան»-ը ձեռքին, «մարդ» յօդուածը բացած: «Մարդը հասարակական կենդանի է»,- կարդաց նաեւ, չգիտեմ, կողքը կանգնած ինձ թէ ընդհանրապէս բոլորին դիմելով՝ ասաց՝ «կուրյո՛զ»: Ես այժմ, այս տողերը գրելիս, վերցնում եմ նոյն բառարանը եւ նայում հրատարակման տարեթիւին. 1970: Ես այդ ժամանակ 18 տարեկան էի եւ «կուրյոզ» բառը չգիտէի... Նրա հետ արդէն գրեթէ քառասուն տարուայ ընկերութեան ընթացքում ես նրանից նաեւ սովորեցի, որ մարդը ոչ թէ կենդանի է (թէեւ այդպիսիք, այո, պատահում են), այլ՝ արարած, եւ որ մարդն ու նրա ստեղծած պոէզիան ո՛չ թէ հասարակական են, այլ՝ արարչագործական: «Բանաստեղծականօրէն է ապրում մարդը Երկրի երեսին»,- ասում է Հիոլդեռլինը: Ես սա մեկնաբանում եմ այսպէս. բանաստեղծականօրէն ապրելով՝ մարդը ապրում է գոյութեամբ եւ գոյութեան մէջ: Իսկ ի՞նչ է լինում, երբ նա բանաստեղծականօրէն չի ապրում: Նա գոյութիւնից սահում-ընկնում է կենցաղի մէջ: Նա սկսում է ապրել կենցաղով: Նա դառնում է «հասարակական կենդանի»: «Հասարակական բանաստեղծ»: Մի խօսքով՝ «կուրյոզ»: «Ի՞նչ է ճշմարտութիւնը «(Յովհ., 11, 12) աւետարանական ամեհի հարցին, որին անգամ Հարցաքննողը չպատասխանեց, նա աջ ու ձախ տալիս է պատասխաններ, որոնք բոլորն էլ իրական են եւ դրանով իսկ՝ անարժէք: Նա բանաստեղծութիւնը դարձնում է իրաւաբանական գիտութիւն՝ կան փաստեր, կան դրանց գնահատականները եւ, հետեւաբար, դատավճիռները: Նա այլեւս չի ճանաչում ճշմարտութեան արտաիրական քաշը, որը արդարադատութեան աստուածուհու կշեռքի նժարներին չի դրւում, որովհետեւ նրա կշեռքի կշռելիութեան սահմաններից դուրս է:- Այն շատ աւելի ծանր է: Նա մոռանում է, որ բանաստեղծութիւնը չի կարող quaestio facti-ն ենթարկեցնել questio juris-ին, քանի որ վերջինս դատավճռի հասկացութիւն է, իսկ բանաստեղծութիւնը վկայութիւն է: Թէեւ բանաստեղծը, իհարկէ, ակամայ վկայ չէ, ինչը կը նշանակէր՝ պատահականօրէն (կամ թէկուզ եւ ոչ պատահականօրէն,- տուեալ դէպքում դա այնքան էլ կարեւոր չէ) ներկայ լինել երկու կամ աւելի անձանց եւ իրերի, ասել է թէ՝ այլոց արարքին եւ հանդէս գալ իբրեւ մի երրորդ կողմ: Նա այն վկան է, որին յոյները ասում էին մարտիրոս՝ բառի ոչ թէ կրօնական, այլ ստուգաբանական իմաստով (այն նոյնպէս նշանակում է վկայ, բայց դա այն վկան է, ով իր չարչարանքներով իրեն վկայում է Աստծուն), եւ կարող է վկայել սոսկ իրեն, այլ՝ ոչ թէ ուրիշներին: Ըստ որում՝ նա որոշ դէպքերում կը գերադասէր, որ իրեն չլսեն... Նա կը գերադասէր իրեն վկայել դատարկ դահլիճներում... «Անապատում խօսողի (վկայողի) ձայն»:- Քանզի նա, ով վկայում է՝ առջեւից է գալիս... ո՞ւմ:- Ահա այստեղ է ինձ համար բանաստեղծի արժէքը: Ահա այստեղ է ինձ համար Հենրիկ Էդոյեանի մեծութիւնը:-

Մեր բանաստեղծութեան մէջ, անկախ լսողների իր լսարանից, դա նախավկայութիւն-բանաստեղծութիւն է: Այն առջեւից եկող բանաստեղծութիւն է:

Վերջին շրջանում մեր իրականութեան մէջ արծարծուած «հրատապ» թեմաներից մէկը «տիրոջ» թեման է:

Այն ծագումնաբանօրէն, իհարկէ, նուիրական հասկացութիւն է եւ ներառում է ձայնաշարի բոլոր ոլորտները՝ սկսած երկնայինից («Սիրիր քո Տէր Աստծուն»), մինչեւ երկրայինները՝ կենցաղային-բարոյախօսականը («Սիրի՛ր քո մերձաւորին») եւ անգամ մշակութաբանականը («Տէր կանգնիր քո աստծին»): Խորհրդային իրականութեան մէջ այն դարձաւ գրեթէ գաղափարախօսական եւ «դու քո երկրի տէրն ես» արտայայտութեամբ վերաձեւուեց իբրեւ նշանաբան եւ անգամ փոքր-ինչ այլախոհական նշանակութիւն ձեռք բերեց: Ինչ աճպարարութիւն ասես գործուեց,- էլ ի՜նչ անտառապահների, հովիւների եւ սլաքավարների կերպարներ,- որպէսզի մոռացութեան մատնուի հասկացութեան նուիրական-հոգեւոր նշանակութիւնը, ա՛յն, որ մարդը, երկիրը, հողը, ժողովուրդը չեն կարող իրենց տեղում անխախտ եւ անխաթար մնալ, եթէ նրա «տէրերը« իրենց գօտկատեղերին ո՛չ թէ «հոգու գօտի» են կապում, այլ թէկուզ եւ զինուած են «այլախոհ» տիրոջ իրենց «կալաշնիկովով»: Կարծեցին, թէ հոգեւոր անտէրութեան մատնուած մարդը կարող է տէր կանգնել իր անտառին ու երկրին:

Կարծեցին, որ խօսքի սուրբ անտառները իրենց մէջ վաղուց հատածները կարող են կանխել հայրենի անտառների անխնայ կոտորածը... Եւ կարծեցին, թէ հոգեպէս տիեզերքի տէրը չլինելով՝ ֆիզիքապէս կարող են իրենց թէկուզ եւ մի բուռ հողի տէրը լինել... Քիչ էին ու չկային ու չեղան այն տէրերը, ովքեր հոգու տէր էին եւ, ուրեմն, այդ բոլորի գաղտնի անունների տէրերը, որոնք անսեփականաշնորհելի էին, որովհետեւ աստուածապատկան էին... Այո, եւ եթէ նրանք հայրենիքի մասին չէին գրում, ապա իբրեւ սեփականաշնորհման օբյեկտի մասին չէին գրում, եւ եթէ նրա մասին լռում էին, ապա իբրեւ աստուածապատկան մի բանի մասին էին երկիւղելով լռում:

Գումարած, որ Հենրիկ Էդոյեանը, այս ամէնով հանդերձ, մեր մշակոյթի պատմութեան մէջ ողջ համաշխարհային գրականութեան միահեծան տէրն է, այն տէրը, որով արժեւորւում, արժէքաւոր եւ մնայուն է դառնում ամենայն ունեցուածք, լինի երկիր թէ հայրենիք, հող թէ ժողովուրդ, կենցաղ թէ գոյութիւն... Չմոռանամ նշել նաեւ այն, Հենրիկ Էդոյեանի բանաստեղծութեամբ դարձեալ նորոգւում է Թումանեանից, Տէրեանից եւ Չարենցից յետոյ կտրուած կապը (ես կ'ասէի՝ պորտալարը) համաշխարհային մշակոյթի եւ բանաստեղծութեան հետ. մեր բանաստեղծութիւնը դարձեալ դառնում է համաշխարհային եւ արդիական բանաստեղծութիւն:

Այն մի կորած յատկութիւն էլ է վերստանում եւ վերստանձնում. մեր իրականութիւնը (պատմական իրողութիւնը, տեղանքը, բնանկարը, ի վերջոյ՝ լեզուն եւ առոգանութիւնը... ի դէպ, ես վերջերս նրա շուրթերից յաճախ եմ լսում «բանաստեղծութեան վիբրացիա» արտայայտութիւնը) Հենրիկ Էդոյեանի բանաստեղծութեան մէջ գոյաբանական աննման կողմեր է ի յայտ բերում, մի բան, ինչը դարձեալ

Չարենցից յետոյ իսպառ անհետացել էր: Այս առումով Հենրիկ Էդոյեանը այն եզակի բանաստեղծն է, ով մեր բանաստեղծութիւնը դարձեալ դրեց օնտոլոգիական ռելսերի վրայ:- Նրա մօտ գոյաբանութիւն է ամէն ինչ՝ սէրը, սարկազմը, միտքը, իրն ու առարկան, կեանքն ու կենցաղը, անգամ քաղաքականութիւնը:

Հանդարտ պատում. բարձր ոճ. իրեղէն հայեցողականութիւն եւ հայեցութեան տանող իրեր. տողը ասութային ամբողջականութեան հասցնելու բացառիկ կարողութիւն, որ հասցնում է լեզուական մինիմա- լիզմի. բազալտի պէս պինդ եւ աւելորդաբանութիւններից ու ծեքծեքումներից զերծ լեզու. ինտելեկտի մեծ պաշարներ, որոնք իրացւում են ամենամարդկային ոլորտներում. խորունկ զգացմունքայնութիւն, որ թաքնուած է «յատակում». «վերեւի» եւ «ներքեւի» հայելային փոխներթափանցուածութիւն, աւելի շուտ՝ փոխանդրադարձումայնութիւն. հարուստ ալլիւզիաներ, ռեմենիսցենցիաներ, պատմա-մշակութային աննման ֆոն. պատկերների եւ մետաֆորների ինքնատիպ համակարգ... Հարկ կա՞յ շարունակելու...

Դա մի բանաստեղծութիւն է, որի առկայութեամբ գրականութեան ճակատագրի հարցում քեզ մի տեսակ ապահով ես զգում անգամ այն դէպքում, երբ տեսնում ես, որ այսօր մեր մշակոյթի մէջ, ինչպէս որ կեանքում, մոլեգնում եւ շուայտում է տգէտը, խուժանը, ռաբիլը եւ, ինչպէս Նիցշէն կ'ասէր, «էպատաժի ժամանակակից մարդը», ում ազատութիւնը նման է սեռավարակի (այո, մարդկանց եւ, ինչպես կասեր Նիցշեն,«մարդուհիների» մէջ արդէն քանի՜-քանիսն են, ովքեր ազատութիւն են... ընկել. սա մեծ թեմա է, միայն ասեմ, որ այստեղ ինձ ամենաշատը տանջողը այն միտքն է, թէ մեզանում արուող ազատութեան կոչերը չլինի՞ թէ տգիտութիւնը քօղարկելու միջոց են), իսկ ամենամեծ հաճոյքը, դարձեալ դիմենք գերմանացի իմաստունին, «հոտ հանելու հաճոյքն է»... Տիրոջ վերոնշեալ այդ զգացողութիւնը Հենրիկ Էդոյեանին եւս մի նուիրապետական աստիճանի է հասցրել. նա համաշխարհային գրականութիւնը ապրում է իբրեւ անձնական փաստ եւ ճակատագիր, եւ, ուրեմն, զգո՛յշ, չխաբէք նրա գերզարգացածութեամբ կամ գիտելիքներով, չիմանա՛ք, թէ երբ նա ձեզ այս կամ այն հարցում առարկում կամ չի ընդունում կամ թէկուզ որեւէ տարեթիւ է ճշտում, դա անում է իբրեւ գիտակ. չէ, դուք դրանով նրա անձնականի ոլորտն էք մտնում: Քանզի երբ ասում ես, թե ես, ասենք, Ալեքսանդր Մակեդոնացուն կամ, օրինակ, Պետրարկային չեմ սիրում, նա կարող է լրջօրէն վիրաւորուել, որովհետեւ դա նոյնն է, թէ նրան ասես՝ ես քո հօրը կամ քո որդուն չեմ սիրում... (Թող ինձ չառարկեն, թէ ես մեր ժամանակի ամենաակնառու բանաստեղծի յոբելեանի առիթով խօսեցի այլ բաներից եւ չխօսեցի Հենրիկ Էդոեանի եւ նրա բանաստեղծութեան մասին: Մեծ պոեզիան նիւթ չէ, ինչի մասին պիտի խօսես,- մեծ պոեզիան առիթ է, որ սկսես խօսել եւ ինչի մասին ուզես՝ խօսես: Իմ սիրելի ընկերը գիտի, որ բանաստեղծութեան հարցերում ես յաճախ «հակաէդոեանական» դիրքորոշում ունեմ, բայց ես ուզում եմ, որ նա մի անգամ էլ իմացած լինի, որ ինքը այսօրուայ իմ սիրած բանաստեղծն է, ինձ համար ճաշակի օրէնսդիր եւ, այո՛, վարպետ եւ ուսուցիչ):




Communities that vote are communities that government listens to. If we do not vote, our voices are not heard. If we want Armenians to have authority in how decisions are made involving our community, we must vote.

Make your voice heard. Exercise your right. Register to vote today!

Register to vote and make some phone calls for Khatchik Chahinian, who is running for Pasadena City Council - District 4.

Together we can do it.

**IMPORTANT VOTER DEADLINES TO REMEMBER:**

Fri., Feb. 18: Last Day to Mail New Voter Registration Applications

Tue., Feb. 22, 5PM: Last Day L.A. County Registrar accepts Walk-In New Voter Registration

Wed., Jan. 12, 6:30 - 8:30PM: Pasadena Citywide Candidate Forum of City Council and School Board Location: La Salle High School, 3880 E. Sierra Madre Blvd., Pasadena

Tue., March 8, 7AM - 8PM: Pasadena City Council and School Board Elections

## ՅՂՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵՂԱՑՈՒՑԻՉ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐԸ



Յղութեան շրջանին, կիներ կրնան որոշ նեղացուցիչ ախտանշաններէ տառապիլ: Ի՞նչ են անոնք եւ ինչպէ՞ս կարելի է զանոնք դիմակալել: Հետեւեալ տողերուն մէջ կը ներկայացնենք անոնցմէ ամէնէն տարածուածները:

**1) Կրկնակիօրէն միզել.-** Յղութեան սկզբնական շրջանին կը պատահի այս երեւոյթը: Կարգ մը կիներ նոյնիսկ այս պատճառով կ'անդրադառնան, թէ կրնան յղի ըլլալ: Այս երեւոյթը կը կրկնուի նաեւ յղութեան վերջին շրջանին, երբ արգանդը կը սկսի միզամանին վրայ ճնշելու:

Լուծումը - Ջուրի եւ այլ հեղուկներու սպառումը բնականին պէս շարունակէ, սակայն նուազեցուր քաֆէինով հարուստ տեսականիները, որովհետեւ այդ կը ներծծէ մարմնին ջուրը, ինչ որ չորութեան կը մղէ: Իսկ եթէ միզելու ժամանակ քիչ մը ցաւ կամ այրուածք զգաս, պէտք է բժիշկին դիմես, որովհետեւ կրնայ ըլլալ բժիշկի միջամտութեան կարիք ունեցող բորբոքումէ տառապիս:

**2) Կազեր. - Որոնք երբեմն** նեղ կացութեան կը մատնեն ենթակային: Կազերու յառաջացման գլխաւոր գործօնը՝ յղութեան պատճառով աղիքներու մէջ գոյութիւն ունեցող ծուլութիւնն է:

Լուծումը - Խուսափիր (կամ թեթեւցուր) հատեղէններու, տապկոցներու եւ սոխի սպառումը, եւ անանուխի թէյով հանգստացուր ստամոքսդ ու աղիքներդ: Ինչպէս նաեւ պէտք է մեծ քանակութեամբ ջուր եւ հեղուկներ սպառել՝ պնդութեան տեղի չտալու համար:

**3) Յանկարծակի փսխունք.-** Այս երեւոյթը կարգ մը կիներուն մօտ կը շարունակուի մինչեւ յղութեան վերջին հանգրուանները եւ անոր պատճառները տակաւին անյստակ կը մնան: Շատ հաւանական է, որ յանկարծակի փսխունքին պատճառը արեան մէջ շաքարի տոկոսին անկումը, արեան ճնշումի անկումը, հորմոնային փոփոխութիւնները կամ սննդական խանգարումը կրնան ըլլալ:

Լուծումը - Օրուան ընթացքին 4-5 ժում կե՛ր (միջակ քանակով), որպէսզի խուսափիս ստամոքսը դատարկ պահելէ եւ արեան ճնշման յանկարծակի անկում արձանագրելէ: Առաւօտուն անկողինէն դուրս գալէ առաջ եւ գիշերը քնանալէ առաջ չորցած հաց կամ աղի քրէքըրզ կեր: Կարգ մը կիներ կը նախընտրեն նաեւ ճինճըր եռացնել ու վրան երկու դգալ մեղր աւելցնելով խմել զայն:

**4) Քիթի հարցեր.-** Յղի կնկան քիթը կրնայ կամ գոցուիլ եւ կամ անընդհատ հոսիլ: Յղութեան հորմոնները ուռեցք կը պատճառեն քիթի պատերուն, ինչ որ անոր գոցուելուն պատճառ կը դառնայ: Ինչպէս նաեւ, այս շրջանին ընթացքին կարելի է տառապիլ անսովոր խռկոցէ: Իսկ հոսելու պարագային, այդ կը յառաջանայ որպէս արդիւնք արեան յաւելեալ շրջագայութեան, ինչ որ կ'աւելցնէ քթային արտադրութիւնները:

Լուծումը - Նախ հարկ է մեղմօրէն խնջել, որպէսզի չարիւնի:

Կարելի է նոյնպէս դիմել շոգի շնչելու ձեւին (ջուրին մէջ քանի մը կաթիլ ձէթեր կաթեցնելով): Կարելի է նաեւ դեղարան դիմել՝ օգտակար կաթիլներով օժտուելու: Իսկ արիւնահոսութեան պարագային, քիչ մը դէպի առջեւ ծռիր եւ քիթի ոսկորին վրայ թեթեւօրէն ճնշէ՝ քիթիդ երկու կողմերէն:

**5) Անդիմադրելի կերպով ուտելիքի կարգ մը տեսակներ ցանկալ.-** Կարգ մը կիներ անսովոր կերպով ցանկութիւն կ'ունենան ճարպոտ անուշեղէններ ուտելու: Այս երեւոյթին պատճառը յղի կնկան մօտ արեան մէջ փրոժեսթերոն հորմոնի քանակի բարձրացումն է:

Լուծումը - Պէտք է ուտելու ցանկութիւնդ յագեցնես՝ առանց բարդացումներու կամ չափազանցուած չփացածութեան:

Կարելի եղած չափով ցանկացած տեսականիներդ ուտելու ընթացք տուր, գրկուածութեան զգացումի յառաջացումը արգիլելու համար: Սակայն չըլլայ թէ տեղի տաս կարգ մը «տարօրինակ» ցանկութիւններու, զորս կարգ մը կիներ կ'ունենան, ինչպէս կաւիճին, հողին կամ ածուխին համին նայելու հակում ունենալը: Այս վերջին դէպքը պատահելու պարագային, հարկ է բժիշկին դիմել, որովհետեւ կարելի է զայն վերագրել մարմնին մէջ երկաթի պակասին:

**6) Կուրծքէն քանի մը կաթիլ կաթի սպրդումը.-** Որ այս հանգրուանին ճանչցուած է քոլոսթրոմ անունով, ինչ որ նեղ կացութեան կրնայ մատնել յղի կնկան, մանաւանդ եթէ ան աշխատող է:

Լուծումը - Հագուստներուդ մաքրութիւնը պահէ՛, կրծքամանին մէջ բամպակէ կտորներ տեղադրելով, մանաւանդ յղութեան վերջին շրջանին ընթացքին:

**7) Մէզի սպրդումը.-** Շատ մը յղի կիներ կրնան իրենց ներքնազգեստը թրջել երբ հազան, զօրաւոր կերպով խնդան կամ ծանր կշռոյթով առարկաներ շալկեն, որովհետեւ ուռած արգանդը արդէն կը ճնշէ որովայնակոնքին վրայ եւ յաւելեալ ճնշում մը աւելցնելով (ինչպէս հազալ, խնդալ, եւայլն) մէզի սպրդում կրնայ յառաջանալ: Այս երեւոյթը կրնայ կարգ մը պարագաներու շարունակուիլ ծննդաբերութենէն անմիջապէս ետք եւս:

Լուծումը - Կարգ մը մարզաձեւեր կիրարկէ, զօրացնելու համար որովայնակոնքիդ մկանները: Եւ զգոյշ եղիր, որ միզամանդ կրկնակի կերպով պարպես ցերեկուան եւ գիշերուան ժամերուն: Չըլլայ թէ ջուրի եւ հեղուկներու սպառումը նուազեցնես, խորհելով թէ այդ մէկը այս հարցը կը լուծէ: Իսկ եթէ այս երեւոյթը ծննդաբերութենէն քանի մը ամիսներ ետք տակաւին շարունակուի, հարկ է բժիշկի միջամտութեան դիմել:

ԼԻՍԻ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

## ԼԻՄՈՆԸ ՈՒԺԵՂ ՀԱԿԱՆԵԽԻՉ



Թթու լիմոնը իր թթւային յատկութեան շնորհիւ ուժեղ հականեխիչ է: Մինչեւ իսկ, եթէ ճամբորդութիւնների ժամանակ խմելու ջրի մաքրութիւնը կասկածելի թուայ, բաւական է մի քանի կաթիլ թթու լիմոն կաթեցնել ջրի մէջ. մանրէազերծում ու հականեխում է այն: Լիմոնը լաւագոյն դեղն է կոկորդացաւի համար:

Մէկ թէյի գդալ թթու լիմոնի հիւթը լցնել մի քիչ գոլ ջրի մէջ եւ ողողել, կը վերանայ բկաբորբն ու կոկորդացաւը: Քթանցքները բռնուելու եւ հարբուխի դէպքում, բաւական է մի քանի կաթիլ թթու լիմոնը խառնել 1 թէյի գդալ ջրի հետ եւ կաթեցնել քթանցքին:

Ստամոքսի բորբոքումը խափանելու համար՝ 1 հատ թթու լիմոնը իր կեղեւով ու հատիկներով ճզմել, ապա 1 բաժակ սառը ջրի մէջ ու 1 գդալ մեղրի հետ լաւ խառնել եւ խմել քնելուց առաջ մէկ ժամ տեւողութեամբ: Մինչեւ անգամ եթէ ուզում էք քթի արիւնահոսութիւնը դադարեցնել, բաւական է բամպակը թաթախել լիմոնի ջրով եւ դնել քթանցքին: Եւ վերջապէս, պէտք է նշել, որ գլիցերինի ու լիմոնաջրի խառնուրդը լաւագոյն դեղամիջոցն է ձեռքի մաշկի համար:

Ձմրանը ցրտահարութեան առաջն առնելու համար ձեռքերը շփել լիմոնաջրով: Լիմոնաջուրը նաեւ արտանետում է երիկամների աւազը:

## ԹԷՅԸ ՕԳՏԱԿԱՐ Է ՈՒՂԵՂԻՆ

Սինգապուրցի գիտնականները յայտարարել են, որ նոյնիսկ օրական մէկ բաժակ թէյ խմելը մինչեւ խոր ծերութիւն, դանդաղեցնում է ուղեղի բջիջների արագ հիւծումը եւ օգնում ուշիմութեանը: Այս հետազօտութիւնը տեւել է 4 տարի: Սինգապուրի ազգային համալսարանի հոգեբանական բաժնի պրոֆեսոր Նէկ Ցէ Պինը այս կապակցութեամբ նշում է, թէ բոլոր տեսակի թէյերը նման դրական ազդեցութիւն ունեն: Թէյը էժանագին եւ թունազերծող ըմպելիք է, որն օգտագործւում է մեծ քանակութեամբ: Այս գիտնականները գտել են, որ «կատչինզը» մի բնական բաղադրութիւն է թէյի մէջ, որը պահպանում է ուղեղային բջիջներին վնասակար պրոտէինի դէմ եւ հետեւաբար նպաստում ուղեղի ընկալման կարողութեանը:

## ԵՐԲ ՅՈԳՆԱԾ ԷՔ, ԹՈՂԷՔ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գիտնականների վերջին հետազօտութիւնները վկայում են, թէ յոգնածութեան ժամանակ աշխատելն ուղղակի բարձրացնում է արեան ճնշումը:

Գիտնականների համոզմամբ, նրանք, ովքեր յոգնած լինելով հանդերձ, շարունակում են աշխատել, կրկնապատկում են իրենց կորցրած կարողութիւնը վերագտնելու համար անհրաժեշտ ջանքերը, որի արդիւնքում նրանք յայտնւում են արեան բարձր ճնշման ու սրտանօթային հիւանդութիւնների վտանգի առջեւ:

Յիշեցնենք, որ արեան բարձր ճնշումը յաճախ կոչւում է «լուռ մարդասպան», որովհետեւ մինչեւ վերջին եւ վտանգաւոր փուլին հասնելը, որեւէ ախտանշան չունի:

## ԴՊՐՈՑԸ ՍԻՐԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԵԽԱՅԻԴ

Բազմաթիւ մայրեր կը գանգատին, որ իրենց երեխան կը մերժէ դպրոց երթալ: Ան կ'ըսէ, թէ նեղութիւն կը զգայ իր ուսուցչուհիներէն եւ դասընկերներէն: Հիմնականին մէջ, եթէ որեւէ լուրջ պատճառ մը գոյութիւն չունի անոր մերժումը արդարացնելու համար, կարելի է դիմել հետեւեալ քայլերուն եւ նախաձեռնութիւններուն.

1) Խօսիր անոր ուսուցչուհիին հետ ուղղակիօրէն, փորձէ իրմէ լուսաբանուիլ երեխադ նեղացնող պատճառներուն մասին:

Կրնայ ըլլալ, որ մէկը ծաղրանքի կ'ենթարկէ զինք (կամ թէ իրեն այդպէս կրնայ թուած ըլլալ), կամ թէ ուսուցչուհիին որոշ բնաւորութենէն երեխադ վախ կը զգայ եւ կամ կրնայ ըլլալ ուսուցչուհին շատ կը պոռայ: Ուսուցչուհի՛ին հետ պատասխանատուութեամբ լուծէ այս հարցը:

2) Պզտիկիդ հետ խօսակցութեան եւ հաղորդակցութեան խողովակներ բաց, որովհետեւ ան իր անձնական կարծիքն ու ըսելիքը ունի եւ հարկ է, որ զինք մտիկ ընես եւ անհրաժեշտ յարգանք ցուցաբերես իրեն հանդէպ, հակառակ անոր մանուկ տարիքին:

3) Թոյլ տուր, որ ան իր հետ դպրոց տանի խաղալիք մը կամ գիրք մը կամ որեւէ բան որ ինք կը սիրէ, իր ուսուցչուհիին եւ դասընկերներուն ցոյց տալու համար: Այս մէկը զինք կ'օգնէ անոնց հետ դրականօրէն հաղորդակցելու:

4) Հերթաբար իր դասընկերներէն ոմանց ընդունիր տանդ մէջ. այսպիսով զինք կը մղես անոնց հետ ընկերային գետնի վրայ շաղուելու եւ այդ պատճառով՝ օրական խանդավառութեամբ դպրոց երթալու:

5) Զգոյշ եղիր, որ անոր տնային շրջապատը զերծ ըլլայ խնդիրներէ եւ տագնապներէ, ինչպէս օրինակի համար ընտանիքին մէջ նոր երեխայի մը գալուստին առիթով նախանձը, ընտանեկան զանազան կամ ամուսնական հարցերու ականատես ըլլալը, եւայլն:

6) Չըլլայ, թէ որեւէ պատճառաբանութեամբ ենթարկուիս իր կամքին եւ ընդունիս զինք քովդ՝ տան մէջ պահել:

## ՅԱՃՆՈՅ ՅԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90 ԱՄԵԱԿԸ



Պաքօն Ռուժի Ս. Կարապետ եկեղեցւոյ սրահին մէջ ներկաները կը ճաշակեն մատաղը

*Շարունակուած էջ 7-էն*

*մանած Տիկ. Մարօ Մարգարեանը որ արտասանեց հատուածներ Յովհաննէս Շիրազի «Տանթէական» պոէմէն:*

*Սոյն յիշարժան հանդիսութեան փակման խօսքը կատարեց Տ. Թադէոս Քհնյ. Ապտուլեան: Ան ըսաւ թէ շրջանի մատղաշ սերունդին հայեցի դաստիարակութիւն ջամբելու համար խիստ կարեւոր է ունենալ կիրակնօրեայ վարժարան մը:*

## ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆ

*Շարունակուած էջ 8-էն*

*նուիրահաւաքին, որուն այս տարուան գլխաւոր ծրագիրն է ջուրի մատակարարումը աւելի քան երկու հարիւր գիւղերուն: Յաջողութիւն մաղթեց Նախագահի առաքելութեան:*

*Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան եւ գնահատանքով արտայայտուեցաւ 1988 թուի Հայաստանի երկրաշարժէն սկսեալ մինչեւ այսօր Արեւմտեան Թեմին կողմէ կատարուած նուիրատուութիւններուն եւ որբերու հովանաւորութեան ծրագիրին: Իր երախտագիտութիւնը յայտնեց Թեմիս նախկին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանին եւ ներկայ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, որոնք գլխաւորած էին նիւթական օժանդակութիւնը Արեւմտեան Թեմի կողմէ:*

*Նախագահ Սահակեան իր ուրախութիւնը յայտնեց, որ անգամ մը եւս կը գտնուէր Առաջնորդարանի նուիրական յարկէն ներս: Իր շնորհաւորութիւնները յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ իր ջանքերով եւ հսկողութեամբ կառուցել տուած էր Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Եկեղեցին եւ Թեմը հաստատակամութեամբ կը շարունակէ իր հոգեւոր, կրթական եւ ազգային առաքելութիւնը: Ապա տեղեկութիւններ տուաւ Արցախի մէջ իրագործուած ծրագիրներու եւ արձանագրուած յաջողութիւններու մասին: Շեշտեց, թէ «Ջուրը կեանք է» եւ թէ մեծ յոյս ունի, որ համայն աշխարհի հայութեան նիւթական օժանդակութեամբ, նախորդ ծրագիրներու նման, այս ծրագիրն ալ ժամանակի ընթացքին պիտի գտնէր իր արդար լուծումը եւ Արցախի մեր հերոս ժողովուրդը պիտի շարունակէ իր բարգաւաճ կեանքը մեր դարաւոր պապենական հողին վրայ:*

*Առաջնորդ Սրբազան Հայրը անգամ մը եւս բարի գալուստ եւ յաջողութիւն մաղթեց Պրն. Նախագահին եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին ազգանուէր առաքելութեան:*

### ՔԱՄԻ
### ԱՆԱՀԻՏ ԵՐԵՄԵԱՆ

Իմ տխուր քամի,
Ո՞ր ես թափառում
Իմ դուռը բակի,
Քեզ չեմ առարկում:

Ջուր ես դու փախչում,
Վազում ես արագ,
Ի՞նչ է, չե՞ս տեսնում
Սիրտս է կրակ:

Արի հանգրգրու,
թող սիրտս մարի,
Որքան եմ լալու,
Օգնիր ինձ, քամի:


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**
**1060 N. ALLEN AVE. PASADENA**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**


## ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐ

*Շարունակուած էջ 8-էն*

*քը, որուն մէջ Սրբազան Հայրը կ՚ըսէր. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն ձեզի կը յղենք մեր օրհնութիւններն ու սիրալիր ողջոյնները եւ ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք ձեր Տրդ Պատգամաւորական Ժողովին, որուն մեզ ներկայացնելով կը նախագահէ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Գերշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան: Մեր մտքին մէջ տակաւին շատ թարմ է, երբ շուրջ ութը տարիներ առաջ ծնունդ առաւ Երգչախումբերու Կեդրոնական Վարչութիւնը եւ սկսաւ կազմակերպչական աշխատանքներ կատարել Թեմիս Երգչախումբերը աւելի զօրացնելու եւ հոգեւոր երգեցողութիւնները ներդաշնակ կերպով կատարելու: Բնական է, յաջողութիւններ արձանագրուած են, որուն ականատես կ՚ըլլանք բոլորս: Սակայն, կ՚ակնկալենք, որ Երգչախումբերուն գաղափարը աւելի զօրաւոր արմատներ գտնէ բոլորիդ մէջ եւ տարուէ տարի յարաճուն արդիւնք եւ յաջողութիւններ արձանագրուին: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է բոլոր Ծուխերուն մասնակցութիւնը եւ համագործակցութիւնը»:*

*Երգչախումբերու Վարչութեան Տարեկան Տեղեկագիրը ներկայացուց Կեդրոնական Խորհուրդի Ատենապետ՝ Դոկտ. Բրշ. Արի Սրկ. Տէմիրալ, իսկ Գանձապահի Տեղեկագիրը ներկայացուց Մաննիկ Մանուկեան: Եկեղեցական Երաժշտութեան Վարիչ Տնօրէն Արժ. Տ. Նարեկ Աւագ Քհնյ. Մատարեան անցեալ տարուան ընթացքին իր ունեցած փորձառութիւնները կիսեց պատգամաւորներուն հետ եւ կատարեց մի քանի թելադրութիւններ՝ ինչպէս աւելի մեծ թիւով երիտասարդներ հաւաքել մեր երգչախումբերուն մէջ, կազմել կրտսերներու երգչախումբեր եւ քաջալերել հաւատացեալները որպէսզի մասնակցին արարողութեանց՝ անոնց սորվեցնելով կարգ մը հանրածանօթ շարականներ:*

*Պատգամաւորները իրենց քննարկման նիւթ դարձուցին նաեւ այս տարուան ընթացքին պատրաստուած Երգչախումբերուն կայքէջը (www.aaccwd.com), որ կը բովանդակէ իւրաքանչիւր Կիրակի օրուան երգուած շարականը: Դոկտ. Բրշ. Արի Սրկ. Տէմիրալի եւ Վազգէն Ազիզեանի կողմէ պատրաստուած այս կայքէջը մեծապէս օգտակար պիտի հանդիսանայ Թեմիս բոլոր Ծուխերու երգչախումբերուն:*

*Սան Տիէկոյի Ս. Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ մէջ գործադրուած «Փոքրիկներու Ամառնային Ցայտագիր»ի մասին իր տպաւորութիւնները փոխանցեց Տէպի Տէրտէրեան:*

*Որոշուեցաւ շրջանային յանձնախումբեր հաստատել Թեմիս Կեդրոնական եւ Հիւսիսային Գալիֆորնիայի Շրջաններուն մէջ, որպէսզի օգտակար հանդիսանան Կեդրոնական Խորհուրդի կողմէ մշակուած եւ գործադրուած ծրագիրներուն:*

*Այս առիթով յատուկ դասախօսութիւն մը ներկայացուց երաժիշտ եւ խմբավար Տիար Կոմիտաս Քէշիշեան եւ որպէս եզրափակում իր խօսքերուն, բոլոր ներկաները առաջնորդեց Խորէնեան դաշնաւորումի «Խորհուրդ Խորին»ի երգեցողութեամբ:*

*Ժողովի աւարտին Ատենապետ՝ Բրշ. Էլըն Եղիա Սրկ. Ճենտեան շնորհակալութիւն յայտնեց Ծուխի Տիկնանց Միութեան եւ անոնց ջերմ հիւրասիրութեան, ինչպէս նաեւ իրենց պաշտօնավարութեան շրջանը աւարտած Կեդրոնական Խորհուրդի անդամներուն, Ատենապետ Դոկտ. Բրշ. Արի Սրկ. Տէմիրալ, Փոխ Ատենապետ Էլիզ Թաշճեան, Խորհրդականներ՝ Ալենուշ Եղնազար եւ Իրաւաբան Բրշ. Ճէֆ Սրկ. Հազարեան, իրենց մատուցած նուիրեալ ծառայութեան համար: Իր փակման խօսքէն առաջ, Հայր Սուրբը շեշտեց, որ երգչախումբի անդամներուն հաւատքը պէտք է հաստատ ըլլայ, որպէսզի եկեղեցւոյ իրենց ծառայութիւնը ազդեցիկ դառնայ:*

*Այս տարուան համագումարին կը մասնակցէին.- Սրբոց Ղեւոնդեանց Մայր Եկեղեցի՝ Պըրպէնք, Ս. Աստուածածին Հայց. եկեղեցի՝ Գոսթա Մեսա, Ս. Պօղոս Հայց. Եկեղեցի՝ Ֆրէզնօ, Ս. Պետրոս Հայց. Եկեղեցի՝ Կլենտէյլ, Ս. Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցի՝ Հոլիվուտ, Ս. Յակոբ Հայց. Եկեղեցի՝ Լոս Անճելըս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցի՝ Փասատինա, Ս. Կարապետ Հայց. Եկեղեցի՝ Ռէնչօ Միրաժ, Ս. Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցի՝ Սան Տիէկօ, Ս.Աբգար Հայց. Եկեղեցի՝ Սքացտէյլ, Արիզոնա, Ս. Պետրոս Հայց. Եկեղեցի՝ Վէն Նայս, Հայց. Եկեղեցի Լա Գանիատայի եւ Քրէսէնթա Հովիտի եւ Հայց. Եկեղեցի Լա Վըրնի:*

*Երգչախումբի Կեդրոնական Խորհուրդի նորընտիր կազմն է.- Լուսիա Թաշճեան՝ Ատենապետ, Վազգէն Ազիզեան՝ Փոխ Ատենապետ, Մարիան Տէրտէրեան՝ Ատենադպրուհի, Մաննիկ Մանուկեան՝ Գանձապահ: Խորհրդականներ՝ Բրշ. Հրանդ Սրկ. Ռաքիճեան, Պարոյր Միրիճան եւ Հրայր Եղիայեան: Պատգամաւորական Ժողովի Դիւանի կազմը՝ Բրշ. Էլըն Եղիա Սրկ. Ճենտեան՝ Ատենապետ, Բրշ. Տոքթ. Սարգիս Սրկ. Մեսրոպեան՝ Փոխ Ատենապետ, Տէպի Տէրտէրեան՝ Ատենադպրուհի եւ Պէն Գրիգորեան՝ հաշուեքննիչ: Դիւանի նոր պաշտօնեաները ընտրուած են մէկ տարուան շրջանի համար:*

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք
հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան
գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

## ՄԱՅՐՍ՝ ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԾԱԼՔԵՐՈՒՄ

*Շարունակուածէջ 13-էն*

*արշալոյսին, որտեղից պիտի բացուէր մի նոր կեանքի սկիզբը՝ այս անգամ արդէն Մայր Հայրենիքում:*

*Եկաւ պահը եւ 1936-ին խորհրդային նաւը արտագաղթող հայերի մի մեծ խմբով յայտնուեց Վրաստանի բաթումի նաւահանգստում:*

*Ի դէպ, այդ նաւով Հայաստան էր բերւում մէկ տարի առաջ մահացած Կոմիտասի դին: Այդ նաւի վրայ են եղել նաեւ մի խումբ հայ մտաւորականներ, որոնցից կարելի է յիշել քանդակագործ Երուանդ Քոչարին, դերասան Արման Կոթիկեանին, նշանաւոր դիրիժոր Եաղուպեանին, հայագէտ-պատմաբան Յակոբ Անասեանին եւ շատ, շատ ուրիշների:*

*Արտագաղթած ֆրանսահայերին բնակարաններ են յատկացնում Արաբկիր թաղամասում, յատկապէս նրանց համար պատրաստուած երկյարկանի փայտէ եօթ բարակներում: 1937-ին ես եմ լոյս աշխարհ գալիս, եւ գիտէ՞ք որտեղ՝ կառքի մէջ:*

*Պատմութիւնը հետեւեալն է:*

*Մայրիկիս երկունքի ցաւերը բռնում են տանը, երբ հայրիկս տանը չի լինում: Այդ օրերին ոչ մի փոխադրամիջոց չկար Արաբկիրում, բացի շրջսովետին պատկանող ձիակառքից:*

*Օգնութեան է հասնում նախագահ Վարսիկը, որ ժամանակին մեծաթիւ նուէրներ էր ստացել մերոնցից, եւ առ ի շնորհակալութիւն, կարգադրում է սայլապանին մայրիկիս շտապ հիւանդանոց հասցնել: Սակայն, ինչպէս ասում են, ես «շտապել» եմ եւ դուրս եմ պրծել մօրս արգանդից հենց կառքի մէջ: Խեղճ մայրս, ամօթահար, կառքի մէջ մի բուռ դառած, սպասել է մինչ այն պահը, երբ չփօթահար հիւանդապահուհիները կարողացել են հիւանդասենեակ տանել նրան ու աւարտել Աստծոյ կողմից օրհնուած գործը:*

*Ես չորս տարեկան էի, երբ հայրիկիս տարան բանակ: Մայրս, որ մինչ այդ բնաւ չէր աշխատել Հայաստանում, ստիպուած եղաւ տիկին Վարսիկի միջնորդութեամբ մի քանի ամսում ձեռք բերել խոհարարի մասնագիտութիւն ու աշխատանքի անցնել:*

*Պատերազմի առաջին իսկ տարում Արաբկիրում բացուեց կառավարական մի ճաշարան՝ Լենինգրադից տարհանուած (Evacuation) մի քանի հարիւր մարդկանց համար:*

*Մայրիկիս կողմից ֆրանսական շքեղ նուէրներով շլացած տիկին Վարսիկի կարգադրութեամբ մայրիկս աշխատանքի է անցնում այդ ճաշարանում՝ որպէս խոհարարի օգնական: Շատ չանցած հայրիկս դառնում է գլխաւոր խոհարար, որի շնորհիւ սովից փրկւում ենք ոչ միայն ես եւ եղբայրս, այլեւ մեր ծանօթներն ու հարեւանները, որոնք, մայրիկիս գծած «ժամատախտակի» համաձայն, ճաշարանի ետեւի մուտքից գաղտնօրէն, իրենց կաթսաներով լի կերակուրը հասցնում էին իրենց բնակարանները:*

*Երկու-երեք տարի տեւեց մեր այդ «արքայավայել» կեանքը: Սովը տիրեց մեր եւ մեր դրացիների ընտանիքներից ներս, երբ աւարտուեց պատերազմը: Գերութիւնից վերադարձած հայրս դեռեւս աշխատանքի էլ չանցած, մայրիկիս ազատել տուեց աշխատանքից.*

*- Մնա տանը եւ երեխաներին հոգ տար, ես կ՚աշխատեմ եւ ամէն ինչ տեղը կ՚ընկնի, - ասաց հայրս:*

*Ի՞նչ իմանար խեղճ մարդը, որ իրեն թոյլ չէին տալու վերադառնալ իր նախկին աշխատանքին՝ պատերազմի ընթացքին թշնամու մօտ գերի եղած լինելու պատճառով:*

*Ճար չկար, պէտք էր ինչ որ բան անել ընտանիքը կերակրելու համար: Փոքրամարմին, կարճահասակ հայրիկս որեւէ այլ աշխատանք անելու ունակ չէր, նրա «գործը» միայն գիտական աշխատանքով զբաղուելն էր:*

*Մայրիկս փորձեց վերադառնալ իր նախկին աշխատանքին, սակայն այդ օրերի համար բաւականին «խղճոտ» «մասնագիտութեանը» տիրանալու համար անհրաժեշտ էր ԽԾԲ (խնամի, ծանօթ, բարեկամ) ունենալ: Վարսիկն արդէն հրաժեշտ էր տուել իր պաշտօնին եւ ինքը օգնութեան կարիք էր զգում:*

*Տան մէջ մնացած փոքրաթիւ արժէքաւոր իրերն արդէն վաղուց էին դարձել օտար մարդկանց սեփականութիւնը: Քիչ թէ շատ ունեւոր «աշխարհների» համար դժուար չէ դիմագրաւել սովն ու անհեռանկար վիճակը: Ըստ երեւոյթին, նրանք նախապէս իմացել էին թէ ինչ երկիր են գնում եւ իրենց ողջ կանխիկ դրամը վեր էին ածել ապրանքների:*

*Միամիտ, աշխարհի անցուդարձից անտեղեակ ծնողներս մի խոշոր ճամպրուկով լի ֆրանսական ֆրանկներ էին բերել Հայաստան, իրենց կարծիքով ապահով ապրելու համար:*

*- Էդ ձեր կապիտալիստական փողերը տուէք ձեր երեխաների թող դրանցով խաղան: Մեր սովետական երկրում միայն ռուբլի, ռուբլի, մեր երկրում դրամի փոխանակութիւն չկայ, պա՞րզ է..., զզւալի արգահատանքով արտայայտուել էր յիսունին բարեւ ասող բանկի աշխատող կինը ու փոքրիկ պատուհանը շրխկացրել էր հօրս երեսին:*

*Իսկապէս էլ, մենք, փողոցի երեխաներս անփմանալի մի խաղ էին ստեղծել մեզ համար: Գունաւոր, մեծ ու փոքր ֆրանսական ֆրանկները դասաւորում էինք ըստ գոյնի ու մեծութեան, այնուհետեւ փոխանակում էինք միմեանց հետ:*

*Ուրեմն, մնում էր որ մայրս ու 14-ամեայ եղբայրս հոգային մեր ընտանիքի հոգսերը՝ սեւագործ բանուոր աշխատելով Բաղրամեան փողոցի վրայ գտնուող, հին արաբկիրցիներին ծանօթ «ռումանահայերի» զոյգ շէնքերի վրայ:*

*1952-ին Արաբկիրի Շրջանային սովետը վարձակալութեամբ զբաղեցրեց մեր տան՝ դէպի փողոց նայող սենեակներից մէկը եւ դարձրեց «Մասսայական գրադարան» ու մայրիկիս նշանակեց գրադարանավարուհի: Երեք տարուայ ընթացքում ես ընթերցեցի գրեթէ բոլոր գեղարուեստական գրքերը:*

*Ստալինի մահից յետոյ, մեր ընտանիքի նիւթական վիճակը փոքր ինչ բարելաւուեց: Մայրիկս ամէն կարելին արեց, որպէսզի հայրիկս ամբողջովին նուիրուի գիտական գործունէութեանը՝ ազատելով նրան ընտանեկան բոլոր հոգսերից ու առօրեայ գործերից:*

*...Մշտապէս շարժուն, ժպտերես, աստղ-խօսող, բանիմաց ու աներեւակայելի ընթերցասէր մայրս կեանքի վերջին տարիներին գրեթէ կորցրել էր տեսողութիւնը եւ ես, կամ հայրս նրա համար ընթերցում էինք օրուայ բոլոր թերթերը: Նա տեղեակ էր հայ աշխարհի բոլոր անցուդարձից ու երազում էր կրկին վերադառնալ այս անգամ արդէն անկախացած Հայաստան:*

*Սակայն, աւաղ, 1993-ի Նոյեմբերեան այս օրերին նա ամբողջովին կորցրեց յիշողութիւնը եւ ընդամէնը չորս օրուայ մէջ հոգին աւանդեց, առանց դոյզն նեղութիւն պատճառելու մեզ՝ ընտանիքի բոլոր անդամներին:*


**ՔԱՂ ՆԱԶԱՐ**

**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30**

**Կլէնտէյլի 380-րդ կայանից**






## ԱՐԱ ՍԱՐԱՖԵԱՆ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԷ ԹՐՔԱԿԱՆ ՈՒՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱԼՔԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*անգլերէն լեզուներով Թուրք ընթերցողին կը ծանօթացուի 1916ին Անգլիական կառավարութեան կողմէ նախաձեռնուած եւ Առնոլտ Թոյնպիի խմբագրած Հայկական Տեղահանութեան եւ Ջարդերու փաստագրութիւններ, ինչպէս նաեւ Աղթամարի 10րդ դարու Ս. Խաչ եկեղեցին:*

*Օրուան յարգելի բանախօսը անդրադառնալէ ետք Մեծ Եղեռնի եւ 20րդ դարու առաջին ցեղասպանութեան հետ առնչութիւն ունեցող պատմավաւերագրական տուեալներուն, ընդգծեց այն հանգամանքը, որ անցնող 90 տարիներու ընթացքին Թրքական ուրացման քաղաքականութիւնը բոլորած է զանազան փուլեր՝ բացարձակ անտեսումէ դէպի ժխտում, ուրացում եւ խեղաթիւրում: Ան յատկապէս անդրադարձաւ վերջին 30 տարիներուն (1980-2010) որդեգրուած Թրքական պետական ուրոյն քաղաքականութեան, որ կը խուսափի փաստերու քննարկումէն եւ փոխարէնը անջատ եւ անկապ պատահարներու ընդմէջէն կը փորձէ վատաբանել եւ ստորնացնել Հայկական Ցեղասպանութեան փաստը: Կաշառելով ամերիկացի պատմաբաններ, ինչպէս Լաուրի, Շօ, Մքքարթի եւ այլք, Թրքական իրերայաջորդ կառավարութիւնները կը փորձեն փաստերու խեղաթիւրումամբ չփոթ ստեղծել: Ան նշեց թէ ինչպէս Թուրք զօրավար Եսատ Ուրազի 40-50-ական թուականներուն գծած ուղին, 70-ականներուն եւ յատկապէս Թուրք դիւանագէտներու դէմ շղթայազերծուած ահաբեկչական արարքներէն ետք, սկսաւ գործադրուիլ Թրքական իշխանութիւններու կողմէ քարոզչական բազմապիսի արշաւներու միջոցաւ Արեւմուտքին համոզել տալու իրենց տեսակէտները: Ուրազին յաջորդեցին Իհսան Սաքարիա, Քամուրան Կիւրիւն, Եուսուֆ Հալաճօղլու եւ այլք, որոնք Թրքական արխիւներու ընտրանի եւ ապակողմնորոշիչ մէջբերումներով սկսան խեղաթիւրման արշաւը ընդլայնել: Թրքական իշխանութեանց այս ծրագրուած եւ համագործակցուած աշխատանքին դիմաց Հայկական կողմը կրնար վեր առնել կարգ մը աղաղակող խեղաթիւրումներ եւ ատոնցմով բացայայտել եւ ջրել անոնց յառաջ քաշած սուտ թեզերը, բայց դժբախտաբար չի յաջողեցանք արժանի հակազդեցութիւն ցուցաբերել: Սարաֆեան նշեց օրինակներ պատմաբաններ Լաուրիի եւ Մքքարթիի վերաբերեալ, ինչպէս նաեւ Մուրատ Պարտաքճիի հրատարակած Թալէաթի Սեւ Գիրքին օրինակը: Ցաւ յայտնելով հանդերձ որ Թրքական բանակի արխիւները տակաւին տրամադրելի չեն հանրութեան համար, ան անդրադարձաւ Օսմանեան Կայսրութեան եւ այլ արխիւներուն մէջ արդէն իսկ բացայայտուած տեղահանութեան եւ Ջարդի վերաբերեալ շատ մը փաստերու ոչ բաւականին օգտագործման մասին: Ատոնց շարքին կ՚իյնայ 1917ին տեղի ունեցած մարդահամարի հայաբնակ վայրերու եւ վերապրած հայերու մասին եղած արխիւային նիւթերը, որոնցմէ որպէս օրինակ կարելի է նշել Էրզրում քաղաքի հայ բնակիչներուն 95 առ հարիւրին բռնի տեղահանուած ըլլալու փաստացի տուեալը: Ան կարեւոր համարեց Թուրքերու ուրացման ներկայ քաղաքականութեան շատ թոյլ ու տկար փաստարկութիւնները շահագործելու անհրաժեշտութիւնը, ցաւ յայտնելով որ մենք չենք կրցած լաւագոյնս օգտագործել ցարդ ներկայացած շատ մը հնարաւորութիւններ:*

*Հարց-պատասխանի բաժնին մէջ, Արա Սարաֆեան դիտել տուաւ որ ներկայիս Թուրքիոյ մէջ կայ գիտակից մտաւորականութեան փաղանգ մը, որ կ՚ուզէ ճշմարտութիւնն իմանալ մօտաւոր անցեալի պատմութեան մասին: Անոնցմէ շատեր արդէն խիզախօրէն մամուլով եւ այլ հրատարակութիւններով սկսած են քօղազերծել իրենց պատմութեան մութ ծալքերը եւ կանգնիլ արդարութեան կողքին:*

*Հարցումի մը պատասխանելով, Սարաֆեան դէմ արտայայտուեցաւ երկու երկիրներու կողմէ կազմուելիք պատմաբաններու յանձնախումբին, ոչ մէկ դրական արդիւնք ակնկալելով անկէ: Ան համոզում յայտնեց որ պէտք է զօրացնել անհատական յարաբերութիւնները հայ եւ Թուրք պատմաբաններու միջեւ, այդպիսով ցեղասպանութեան իրականութիւնը լայնօրէն տարածելով Թուրք ժողովրդային խաւերու մօտ: Ան նշեց որ Թուրքերը պատրաստ են երկխօսութեան եւ անոնք համալսարանական շրջանակներու մէջ բաց են միտքերու փոխանակութեան համար, ոչ միայն գիտնալու իրականութիւնը հայկական ցեղասպանութեան մասին, այլ նաեւ հետազօտելու իրենց մօտիկ անցեալի քօղարկուած պատմութիւնը: Երեւոյթ մը որ բաւականին դրական կը համարուի: Ինչ կը վերաբերի ցեղասպանութեան հարցի հետապնդման աշխատանքներուն, ըստ Սարաֆեանի, ներկայ հանգրուանին ոչ մէկ անպատեհութիւն կայ, որ սփիւռք եւ հայրենիք զուգընթաց աշխատանք տանին միեւնոյն նպատակին շուրջ տարբեր մակարդակներու վրայ:*

## Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 1-էն*

*ունեցաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեանի հետ, որ այս օրերուն քաղաքս կը գտնուի Հայաստան Համահայկական Հիմնադրամի թելեթոնին առիթով: Սոյն հանդիպման ներկայ էր նաեւ Ղարաբաղի առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան: Հնչակեան կուսակցութեան պատուիրակութեան մաս կը կազմէին Վազգէն Խոտանեան (ատենապետ), Տօքթ. Արշակ Գազանճեան («Մասիս»ի գլխաւոր խմբագիր), Գաբրիէլ Մոլոյեան (Նախկին ատենապետ) եւ Միհրան Խաչատուրեան (Վարիչ Մարմնի անդամ):*

*Վսեմաշուք Նախագահը ողջունելէ ետք ներկաները հակիրճ զեկոյց մը տուաւ Լեռնային Ղարաբաղի մէջ անցնող մէկ տարուան ընթացքին տարբեր բնագաւառներու մէջ արձանագրուած յաջողութիւններուն, ինչպէս նաեւ երկրի յառաջընթացը խոչընդոտող էական հարցերուն մասին: Այնուհետեւ տեղի ունեցաւ սրտաբաց զրոյց, որու ընթացքին խորհրդակցութեանց նիւթ դարձան սահմանամերձ գիւղերու ջրամատակարարումը, Հայաստանի եւ այլ երկիրներու կողմէ Արցախի Հանրապետութեան ճանաչումը, արտագաղթը, Հայաստան-Արցախ փոխ-յարաբերութիւնները, պաշտպանական բանակի իրավիճակը, Արցախի հիմնահարցի լուծման զարգացումներն ու երկիրը յուզող այլ կենսական հարցեր:*

*Շուրջ մէկ ժամ տեւող վերոյիշեալ հանդիպումն անցաւ փոխադարձ հասկացողութեան, անկեղծ եւ շինիչ մթնոլորտի ներքեւ: Հրաժեշտ առնելէ առաջ Ս.Դ.Հ.Կ.ի ներկայացուցիչները իրենց ջերմ բարեմաղթութիւնները փոխանցեցին Ղարաբաղի Նախագահ Բակօ Սահակեանին եւ հոգեւոր առաջնորդ Գերշ. Պարգեւ Սրբազանին:*

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՄԱՐԻ ԼԵՌԱՆԵԱՆ-ՔԷՕՇԿԷՐԵԱՆի մահուան առթիւ «Մասիս»ի եւ աշխատակազմը իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, յատկապէս մեր օրկանի բարեկամ՝ Տէր. եւ Տիկ. Վարդան եւ Վարդուհի Լեռնանեաններուն:*

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՄԱՐԻ ԼԵՌԱՆԵԱՆ-ՔԷՕՇԿԷՐԵԱՆի մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Արփի Մարգարեաններ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վարդան եւ Վարդուհի Լեռնանեաններուն:*

*Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ին բարգաւաճման ֆոնտին:*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Մի ոմն «Մասիս»ի բովանդակութիւնը գնահատելով $100 տոլար կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին:*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիէկօ Գարամանուկեանի Լոս Անճելոս այցելութեան ուրախ առիթով Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

*Նոյն առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*


## ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

# ԱՌԱՆՑ ՁԿԱՆ ԱՊՐԵԼ ԿԱՐԵԼԻ Է, ԻՍԿ ԱՌԱՆՑ ՋՐԻ՝ Ո՛Չ: ԿԱՄ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԿԱՅ, ՊԷՏՔ Է ԱՅՆ ԿԻՐԱՌԵԼ

*ԴՈԿՏ. ԱՐԱՄԱՅԻՍ ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆ*

Կրիպոյետովով գիւղն ու նրա բնակիչներն իմ սրտին մօտ են երկու կարեւոր հանգամանքներով. Առաջինն այն բանի համար, որ այնտեղ ապրել ու աշխատել է իմ հայրենադարձ քոյրիկը, իսկ երկրորդը՝ պատմական այն հանգամանքը, որ գիւղը կոչւում է հայ ժողովրդի մեծ բարեկամ, ռուս մեծ գրող ու դիւանագէտ Ալեքսանդր Կրիպոյետովի անունով: Դեսպան Ալեքսանդր Կրիպոյետովը գազանաբար սպանուեց շահական Իրանում նաեւ հայերին բարեկամ լինելու ու նրանց օգնութիւն ցուցաբերելու «մեղքով»:

Այսքանը պատմութիւն...

Իսկ ի՞նչ է կատարւում այսօր Արարատեան դաշտավայրի գիւղերում եւ Կրիպոյետովում:

«Հետքի» համարձակ ու հայրենասէր երկու լրագրողներ՝ Քրիստինէ Աղալարեանն ու Գրիշա Բալասանեանը լաւագոյնս ներկայացրել են, թէ ինչ աղէտ է կատարւում «տնտեսական ազատ շուկայական յարաբերութիւնների» պայմաններում գտնուող անկախ Հայաստանում



### ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐԻ ԳԻՒՂԵՐԸ ՋՐԱԶՐԿՒՈՒՄ ԵՆ ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻ ԲՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ջրազրկմանը յաջորդում է արտագաղթը:

Ջարագործների ընչաքաղցութեան տենդը այն աստիճանի է հասել, որ իրենց գերշահոյթների համար անխղճօրէն կտրում են գիւղացու ոռոգման ու անգամ խմելու ջուրը, որն էլ պատճառ է դառնում, որ ժողովուրդը վհատւում է ու հեռանում երկրից:

Քարաւանները շարունակում են քայլել, իսկ սփիւռքի յարգելի նախարարուհին «արի տուն» է կանչում: Տեղին է հարց տալ՝ ինչպէ՞ս տուն գալ, երբ գայլերը ոչ միայն սարերում, ոսկու ու մոլիբդենի ու պղնձի հանքերում են, այլ Սեւանի ափին, քաղաքներում, գիւղերում, դաշտերում ու ամէնուր: Ո՞վ է այս տան տէրը, ու՞մն է մեր հայրենիքը...

Աշխարհի նորմալ զարգացող երկրներում, ուր կարգ ու կանոն կայ ու օրէնքն է իշխում, գրագէտ, բանիմաց ու արհեստավարժ գործարարները իրենց շահոյթի մէկ մասը յատկացնում են գործի ու արտադրութեան զարգացմանն ու մոդեռնացմանը, որը բարձրացնում է արդիւնաբերութեան օգտակար գործողութեան գործակիցը, բարելաւում է աշխատաւոր մարդկանց բարեկեցութիւնը եւ թեթեւացնում է նրանց ծանրաբեռնուածութիւնը:

Այս քաղաքակիրթ մեթոդները չգիտես ինչու՞ այսքան դժուար հասկանալի են Հայաստանի նորաթուխ բիզնեսմենների համար:

Ջրհան պոմպերի աշխատանքների աւտոմատ կարգաւորումն ու այդ եղանակով ջրի ու էլեկտրաէներգիայի խնայողութեան մեթոդիկան տարիներ է, ինչ պրակտիկայի մէջ կիրառւում է: Պոմպերի շարժիչների պտտման արագութիւնը կարգաւորող (speed Controller) կիսահաղորդչային սարքաւորումների միջոցով եւ PLC (The Programmable Logic Controller)-ի օգնութեամբ ու պոմպերի աշխատանքային ռեժիմների հսկմամբ կարող է մեծապէս լուծել ջրի անխնայ օգտագործման հարցը եւ մասամբ լուծել Հայաստանի գիւղատնտեսութեան գլխին կախուած «չոր քարին նստելու» վտանգը:

Այս մեթոդիկան ու սարքաւորումները տարիներ առաջ ես փորձարկել եմ Կրիպոյետովով գիւղում, իմ քոյրիկի տնամերձ հողերը ջրող պոմպի աշխատանքի վրայ, որի արդիւնքում ջրի հոսքը կարգաւորուեց շատ սահուն, պահանջուած քանակութեամբ՝ ըստ նախատեսուած կրաֆիքի:

Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանում (Պոլիտեխնիկական ինստիտուտում)



տողերիս հեղինակի նախաձեռնութեամբ, Գալուստ Կիւլպենկեան հաստատութեան ու Սթոքհոլմի Արքայական Տեխնոլոգիական Ինստիտուտի հետ միջեւ համալսարանական համագործակցութեամբ, արդէն քանի տարի է, ինչ աշխատում է մի ժամանակակից լաբորատորիա:

Այստեղ լուծւում են վերը նշուած խնդիրները: Կրիպոյետով գիւղում կատարուած փորձարկումները օգնեցին նշուած լաբորատորիայի սարքերի անխափան աշխատանքները ստուգելու գործին: Այս լաբորատորիայում մասնագիտանում են մեծ թւով ուսանողներ: Լաբորատորիան ցուցադրուել է հանրային հեռուստատեսութեամբ:

Բոլոր նրանք, ովքեր հետաքրքրուած են այս հարցով, խորհուրդ կու տամ այցելել ՀՃՊՀ աւտոմատ կարգաւորուող համակարգերի լաբորատորիա: Ամբիոնի վարիչ դոցենտ Էդուարդ Յակոբեանը ձեզ կը ծանօթացնի լաբորատորիային եւ կը պատասխանի ձեզ հետաքրքրող հարցերին: Հեռ. 093 50 9750

### ՈՐ՞Ն Է ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Ստոքհոլմից հեռախօսով կապուեցի Կրիպոյետով գիւղի գիւղապետ պրն. Սօս Գաբրիէլեանի հետ: Պէտք է ասել, որ հայրենասէր մարդ է Սօս Գաբրիէլեանը, մտահոգուած ոչ միայն իր գիւղի բնակիչների ճակատագրով, այլ անհանգստացած ողջ Արարատեան դաշտավայրի գիւղատնտեսութեան ու գիւղացիների ճակատագրով: Հարցի առաջնահերթ լուծումը պահանջւում է, որպէսզի.

Արարատեան դաշտի գիւղական բոլոր համայնքները միահամուռ ուժերով պահանջեն գիւղատնտեսութեան նախարարութիւնից, որպէսզի լրջօրէն զբաղուի այս հարցով...

Ջկնաբուծական ֆիրմաների սեփականատէրերը պոմպերի մեխանիկական՝ բացուող ու փակուող փականները անյապաղ փոխարինեն աւտոմատ կարգաւորուող ժամանակակից սարքաւորումներով, որը կ'ապահովի ջրի ու էլեկտրաէներգիայի զգալի խնայողութիւն:

Ամենակարճ ժամանակամիջոցում տեղադրել ջրաչափիչ սարքեր:

Ելնելով բնապահպանման պահանջներից, սահմանափակել աւազանների ու արտեզեան հորերի քանակը:

Բնապահպանութեան ու «կանաչներ»է կազմակերպութիւնները պէտք է լրջօրէն ու անշահախնդիր հետեւեն այս գործի ընթացքին:

Վերջում ցանկանում եմ իմ ողջոյնի ու քաջալերանքի խօսքերը յղել «Հետք»ի համարձակ լրագրողներ՝ Քրիստինէ Աղալարեանին ու Գրիշա Բալասանեանին իրենց հայրենանուէր գործի համար:

**Հայաստանի «Սարդարապատ» շարժման սփիւռքահայ համակիր**

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 for USA
* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.
* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.
Name: ------------------------------------------
Address: ---------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :------------------------ Fax : ------------------------